


Урлуктун




Урлук

Дундуктуу



1905



06 DEC 2010

0708 330 80

128

891.542.3

Շ-99

Մ. Տ. ՇԻՈՏ

---

# Ա Ր Ա Մ Ը

(ԳԾԵՐ ՀՍ.Յ.-ՔՐԴՍ.ԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ)

(Բ. Տպագրութիւն)



Ս. - ՊԵՏԵՐՔՈՒՐԳ.  
'ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ'

1905





1905 JAN 10

3 0 0 0 2

ДОЗ. ЦЕНЗ. С.-ПЕТЕРБУРГЪ 10 ЯНВАРЯ 1905 Г.

«Пушкинская Скоропечатня» Лештуковъ пер. 4

## ԵՐԿՈՒ ԽՕՍԻ

Հայկական իրականութիւնը մեզ բերել էր այն եզրակացութեան, որ հայ հեղինակների գրքերը դատապարտւած են երկարամեայ բանտարկութեան և փոշու մէջ փտելու: Այսօր, սակայն, մտիթարական փաստ է այն, որ «Քիւրտ պէկի» հազարաւոր օրինակները կը տարածուին: Բնակարձ ժամանակամիջոցում, մի բանի ամիսներ ընթացքում միայն, և ես կստիպւեմ ձեռնարկել կրկին տպագրութեանց, փոխանակ հրատարակելու յաջորդ հատորները: Այդպէս պատահեց զոնէ Ա. ներկայ և Գ. հատորների հետ: Այդ հանգամանքը կը խրախուսէ ինձ՝ շարունակելու համար արդէն սկսւածը— «Քիւրտ Պէկի» մնացեալ ՈՒԹ՝ հատորների հրատարակութիւնը՝ որին կը ձեռնարկեմ ներկայ տարւանէ: Աւստի

մեր յարգելի բաժանորդները թող բարեհաճեն  
մի փոքր էլ համբերութիւն ունենալ և կըս-  
տանան իրենց զբերը յաջորդաբար:

Ընդ դմին յայտնելով խորին շնորհակալու-  
թիւնս այն բոլոր աղգասէր բարեկամներիս,  
որոնք ամեն կերպ աջակցեցին ինձ հրատարա-  
կելու և տարածելու իմ հեղինակութիւնները՝  
վստահ եմ, որ այսուհետեւ էլ կըշարունակեն  
իրենց սիրած բարի գործը, որով նպաստած  
կը լինեն աղբատիկ հայ զրահանութեանը:

19<sup>18</sup>04  
x

Ենւոպա.

Շ.

Նահատակածներին

Վշտալից սրտիս բոլոր խորշերով  
 Կը յարգեմ, ՋՈՀԵՐ, Ձեր յիշատակը...  
 Ձեզ—որ Բընութեան առաջ ընկճեցի՞մ  
 Փակեցիք կենաց Ձեր նեղ դընակը,—  
 Խորին յարգանքով, թողէ՛ք, նւիրեմ  
 Տկար գրիչիս Բ. Երեսայրին...  
 Բուռն զգացմունքով Հանգի՛ստ կը խնդրե  
 Ձե՛ր բազմաչարչար Ս. Ասկորներին...

Կենդանի-մեռեալ, ա՛հ, Ձեր Գամբարան  
 Պիտի սցեկէ՛մ, առնե՛մ իմ կարօտ.  
 Թէ՛ մի օր կասեն «Մարտիկ Տէրոյեան  
 Ձը հասաւ ըղձին, ա՛հ, ննջեց Շւոտ»...  
 ՀԻՈՏ



# Ա Ր Ա Մ Ը

Գ՛ԾԵՐ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

## I.

Բ Ս. Լ ՈՒ քաղաքի հարաւ-արեւմտեան կողմը կիչնայ Ս. շմուշատ կոչւող գիւղախումբը, ուր կը գտնւի, իմիջի այլոց, և Նաճարան հայաբնակ գիւղը, որ հաստատուած է Պաղինեան լերանց հիւսիսային ստորոտում, երկու հանգիպակաց բլուրների լանջքերին վրայ: Նաճարանը շրջապատուած է գեղեցիկ պարտէզներով ու անվերջ այգիներով, որոնք հեռէն

Նաճարանին մի սիրուն, անտառային  
տեսք կրնժայեն:

Նաճարան գիւղումն էր «մեծանուն  
Մելիք Մխաթի գերդաստանը, որի ոչ  
հարստութեանը չափ կար, ոչ հողերին՝  
սահման, ոչ նրա տունը գնացող-եկող՝ սւ-  
տող-խմողին-թիւ և ոչ էլ նրա հանգրս-  
տութիւնը վրդովող որ և է հանգամանք»,  
ինչպէս կը վկայեն ժամանակակից ծե-  
րունիները:

Մելիք Մխաթենք Նաճարանում, իրենց  
կեանքով, ձեզ կը չիշեցնէին հայր Արրա-  
համը, այս զանազանութեամբ, որ մինչ-  
գեռ վերջինս խաշնարածութեան ասպա-  
րիղում կը փայլէր՝ Մելիք Մխաթենք  
«համփա ռանջբար» էին: Տասնեակ հա-  
զարաւոր տեսնադին (օրավար) հող ու-  
նէին նօքա, մեծաւ մասամբ վարելահող,  
որի մի խոշորկէկ մասը նրանք վարձու  
կուտային գրսեցի կապալառու—հողա-  
գործների (Apendamop), որով մի պատ-  
կառելի գումար տարէց տարի կը բարդ-

ւէր Մելիք Մխսաքի կարողութեան վրայ: Իսկ իր մշակած մասին վրայ Մելիք Մխսաքը կաշխատցնէր մօտ 200 — 250 հողի, որոնց կէսէն աւելին վարձու բանւորներ էին՝ Նահարան և այլ հայաբնակ գիւղերէ:

Մելիք Մխսաք Մխսաքենց տունը, որ մօտ 2 տեսնադին տեղ կը գրաւէր Նահարան գիւղի ծայրուծը, երկյարկանի և օթեկաշատ մի շինութիւն էր: Տունը շրջապատող հրաշալի պարտէզին չորս կողմը կը բոլորէր՝ մի մարդահասակ բարձրութեամբ՝ քարաշէն պարիսպը, որի արևելեան և հիւսիսային կողմերում բացւած էին մի—մի կամարակապ դուռ: Այդ դռներէն առաջինը կը ծառայէր՝ մարդոց ելումուտին, իսկ միւսը՝ բազմաթիւ կենդանեաց:

Թէ՛ տան բակին մէջ և թէ պարտէզի մի քանի մասերում քարուկիր աղբիւրներէն կը վազէին առատօրէն զուլայլ, ախորժահամ ջրեր, որոնք հիւսիսային դրան

ներքև միանալով՝ մի մեծ վտակ կը կազմէին և կերթային գիւղի ներքևի ջրաղացները դարձնելու և արտերը ոռոգելու: Արտեր, որոնք Մայր Բնութեան անսպառ պարգևների և հայ գեղջուկի պատմական ժրջանութեան շնորհիւ «կաթ ու մեղր» կարտադրէին: Ըստ որում և երջանիկ էին հայ գիւղացիք Աշմուշատում:

Այո, համեմատելով Տաճկա-հայաստանի այլ կողմերի հետ՝ Թիլ, Թռխէ, Նահարան, Մեղրաբերդ (Պալ-Գայեա), Վարդենիկ և այլ աշմուշատեան հայ գիւղերի ժողովուրդը կարելի էր երջանիկ համարել: Որովհետև այդ գիւղերը լինելով զուտ հայաբնակ և հեռու քրդական աշիրաթ ցեղերէ՝ ենթակայ չէին վերջինների անտանելի հարստահարութեանց:

Մանաւանդ Մելիք Միսաքի գերդաստանը, որ նոյն իսկ «ընդհանուր աղէաների» ժամանակ—որպիսիք էին՝ Տոլեցոց ապստամբութիւնը, Օշինցոց և Պահրո-

ցոց ընդհանուր ցեղային կռիւները ևն, որոնց ընթացքում Աշմուշատի հայ գիւղերն էլ զգալի վնասներ կրեցին.— շնորհիւ նահապետի բարոյական ազդեցութեան անվնաս դուրս կը գար:

## II.

Աշմուշատի և Բալու քաղաքի միջև կիջնայ, Արածանիի ծախ ափին վրայ, «Մ ա չ ո յ ի ն Դ ի Ր Ր».— մի զեղեցիկ սարահարթ՝ 15 վերստաչափ երկարութեամբ արևելքէն արևմուտք և 10 վերստաչափ լայնութեամբ հիւսիսէն հարաւ:

Այդ սարահարթէն, որ միակ նանապարհն է Բալուէն Աշմուշատ զնալու համար, գէպի Նաճարան կը դիմէին երկու քիւրա տղամարդիկ, մի քրտուհի և էշի վրայ բեռցած մի բեռ «քրտու լամուքներ» — երեխերք:

Մի երկրորդ էշ կը տանէր քիւրա ըն-

տանիքի տնային բոլոր ծանրոցքը:—1  
 —2 մաղ, 1—2 ժանդոտած ու մրի մէջ  
 կորած պղնձէ խաղկին, 1 հատ փայտէ  
 տաշտ, որի մէջ քրդուհին երբեմն հացի  
 խմորը կը շաղէր, երբեմն լածուքը կըլ-  
 ւար, երբեմն լւացք կանէր, երբեմն էլ  
 չորացած արեխները նրա մէջ կը թրջէր,  
 կը կակղացնէր... 1—2 կտոր «հալհլած»  
 փսիաթներ ու կապերաների կտորանք  
 որոնք կը ծառայէին անկողնի տեղ: 1  
 հատ լաւաշ թխելու մրոտած «սաճ»,  
 3—4 հատ շերեփի մեծութեամբ պոչատ  
 գտալ և վերջապէս խորովածի համար մի  
 քանի երկաթէ շամփուր:—Ս.հա աչգ կեն-  
 դանու թանգաղին բեռը, որ զաղթական  
 քիւրտ ընտանիքի «եղած-չեղածն» էր:

Երկու աղամարդիկը, չ'նայած իրենց  
 պատառոտուն հագուստներին և ոտքերի  
 բորիկութեանը՝ զինւած էին ոտքէ գլուխ  
 շատ լաւ: Նրանցմէ իւրաքանչիւրը կը  
 կրէր մի շէշխան.—հրացան, մի կեռ-  
 սուր, մի կաշձոտ ատրճանակ, մի երկ-

սայրի դաշույն և մի թունաւոր նիզակ: Զանազան հուլունքներով զարդարւած և վառօղ, գնդակ, հրահան, կաշճքար, արէթ, բրջեր և պատրաստի վիրակապ (մուշամպա) լեցրած կաշեայ տոպրակները ձգել էին ճտերէն և ամբացրել էին անութներին ներքև:

Քրդուհին այն հալումն էր, որ Աստուած թշնամուս չիցոյց տալ: Նա հագել էր մի աղտոտ, իր բնական ճերմակ գոյնը կորցրած, երկար շապիկ, որն այնքան կարկատաններ ունէր իր վրայ, որքան քրդուհին տարիք չուներ: Թւերը, կուրծքը, գլուխն ու ոտքերը մերկ էին և դանեցնելու չափ աղտոտ:

Նո լամուքները իրենց մօրմէն լաւ գրոթեան մէջ չէին, ոչ հազուստով, ոչ էլ մաքրութեամբ: Սակառների մէջէն կերէէին նրանց խոշոր գլուխները...

Հասնելով Նանարան գիւղը՝ բրդերը դիմեցին Մելիք Միսաբենց տունը և բա-

կու՛մ ցած բերին էշերի բեռները: Մեծ տղամարդը ասաց ըրդու հուն՛ն.

— Քէյնէ՛, շէօ զէնէ, վանը խաղուն-  
ռա քի եօվ նան ու հիւղի տէօվ պրտը...  
(Սղջիկ, ներս գնա ասա տիրուհուն, որ  
մի հաց և մի քիչ թան տայ մեզ ու-  
տելու):

Քրդուհին քարէ սանդուխքէն բարձ-  
րացաւ վեր—«այվանը» և համարձակ ձօ-  
տեցաւ տանտիկնոջը, որ դաշաւորներին  
համար կերակուր կեփէր ահագին կաթ-  
սաչով, ու ասաց նրան.

— Տիրուհի, Սլլա հի հիւրն ենք,  
մի քիչ ուտելիք տուր մեզ:

Տանտիկինը առանց երկար-բարակ մտա-  
ծելու կանչեց իր մօտ՝ դաշաւորներին  
ճաշ տանելու համար եկած հարսին և  
պատուիրեց կատարել ըրդուհու խնդիրը:

### III.

Երեկոյեան ուշ ժամանակ Նանարանցի  
դաշաւորները դարձան զիւզ: Մելիք Մի-

սաքն էլ հաճշիրակ ծերերի և «Մելիք Տէրատէրին» — գիւղի քահանային հետ եկեղեցիէն դուրս գալով՝ հաւաքւեցան Մելիք Միսաքենց տունը:

Հարսներն արդէն պատրաստել էին ընթրիքի սեղանը, որի շուրջը շարուեցան «Գեղին Մեծաւորները» և քաղցր զրոյցներ անելով՝ սկսեցին ուտել-խմել: «Չարտախի» մի ուրիշ կողմում կրնթրէին տան միւս տղամարդիկը՝ իրենց բունւորների և տասնեակ հիւրերի հետ:

Իսկ կինարմատները — որ դաշտում արդոց հաւասար աշխատելով նոյնպէս չոզնած ու անօթի էին — պիտի սպասէին մինչև այր մարդոց ընթրել — վերջացնելը, որ այնուհետև իրենք էլ սեղան նստէին: «Եթէ կին մարդը մանչուն հետ կամ առաջ սեղան նստի՝ Սատուած կը բարկանայ»...

Երբ մեծաւորներն ընթրեցին վերկացան, ցորեկին եկած քիւրտ տղամարդոց՝ մէն մին ներկայացաւ Մելիք Միսաքին:

և խորը գլուխ տալով՝ կեցաւ մի կողմ:

— Ո՞վ ես, քիւրա, և ի՞նչ կուզես, հարցուց Մելիք Միսաքը:

— Ծառաներդ անգործ ու աղքատ մարդիկ են, քեզ զուրպան, պատասխանեց քիւրար,— ձեզմէն պիտի խնդրենք, որ մեզ մի գործ տաք: Մենք քչւոր ենք, աղա, ես, եղբայրս, կինս և 5 լակոտներ: Երեք չափահասներս լաւ կաշխատենք և կերած հացերս հարամ չենք աներ, արխալին կացէք:

— Դու մեզ աչն ասա, թէ որ տեղացի էք դուք:

— Մեր նախնիքը Ղամիշլուք գիւղէն եկել և հաստատուել են Քուրմ գիւղում:

— Ղամիշլուքէ՞ն... Բայց Ղամիշլուքում երբ և իցէ քրդեր չեն եղել բնակւելիս:

— Աղա, գլխիդ մատաղ, մենք այդպէս ենք իմացած մեր մասին:

— Լաւ. հապա ի՞նչպէս է ձեր մականունը:

— Մեզ կը կոչեն Փափազ— օղլի, քեզ  
զուրպան, Փափազ—օղլի:

— Իսկ երբ և իցէ զուր ունեցել էք  
ուրիշ որևէ մականուն:

— Ոմանք (մեր զեղի հներէն) կասեն,  
որ մեր տոհմը մի ժամանակ կոչուելիս է  
եղել Տէրաէրենք, ոմանք էլ [Թէ Վէր-  
տան - Զատէ:

Մելիքները լսելով վերջին խօսքերը՝  
զարմացած նայեցան իրարու:

Տանտէրը շարունակեց իր հարց ու  
փորձը:

— Դուք Սլի Պէկի անէն էք:

— Պէկի (այո), աղա, Սլի Պէկի անէն  
ենք:

— Իսկ լուսահողի Զուրուրու [Թ-Նա-  
նուր մի ինչքն էք զուր:

— Ես ու եղբայրս (նա նախ մեր ծա-  
ռաներին հետ կ'ընթրէ) Նրա որդիքն  
ենք...

Քիւրզը մի ծանր ախ քաշեց սրախ  
խորքերէն և նրա խոշոր, արիւնակալած

աչքերուձ երևացին մարգարտափայլ կաթիլներ...

Մելիքներն էլ լռեցին՝ հոգեբուղիս հառաչանքներ արձակելով...

Այդ միջոցին ներս մտաւ Մելիք Միսաքի ծառաներէն մին և քրդուն ընթրիքի հրաւիրեց: Վերջինս անփոյթ կերպով ուսերը թափ տուաւ...

— Գնա, ընթրէ և վերադարձիր, ասաց նրան Մելիքը: Քիւրար հեռացաւ:

#### IV.

— Վերդան-Չատէ՛, մրմնչաց Մելիք Միսաքը.— գիտէ՞ք ովքեր են դրանք:

— Ինչպէ՞ս չէ, ասաց մի ուրիշը:— Ղամիշլուքի Վարդանեան գերդաստանն է այդ, որի մի հատուածը կէս դար առաջ քրդացաւ, մնացածներն էլ Ձէյնէլ և Ալի աղաների չայտնի ընդհարման զոհ գնացին:

— Այո, հաստատեց Մելիք Մուրա-

ար.—հէնց Վարդանեաններն են դրանք...  
 Երբ Մելիք Խաօն ու իրեք որդիքը սպան-  
 ւեցան՝ այդ գերդաստանէն ճողոպրածները  
 սպաստանեցան յաղթող Ալիին մօտ, ուր  
 այդ միջոցին կը մնար Մարտօն, այսինքն  
 Մելիք Խաօսի երէց որդին և Ալիի առե-  
 ւանդած աղջկայ՝ Թուրվանտայի հայրը...  
 Մարտօն այնուհետև կոչւեցաւ Մըստօ  
 և բոլոր իւրայիններով բրդացաւ... Նոյն-  
 պէս ինքնակամ բրդացան և ուրիշ շատ  
 Ղամիշլուքցիներ ու անցան այս կամ այն  
 քիւրտ ցեղին մէջ... Այժմ միայն մակա-  
 նուններն են մնացել հայկական, այն էլ  
 խիստ ազաւաղած, իսկ սրտերը դարձել  
 են մի—մի «գերեզման հայկական պատ-  
 ւի...<sup>1</sup>»:

1) «Հայկական պատւի գերեզման» Աշմու-  
 շատցոց բարբառում կը նշանակէ «Թշնամի  
 Հայութեան»:

— Յաւալի՜ երևոյթ, շշնչացին նրան-  
ցմէ մի քանիսր:

— Այնու ամենայնիւ, ասաց Մելիք Միսաքը, — Պէտք է խնամք տանել մեզ դիմողներին վրայ... Պէտք է պահել-պահ-պանել զրանց և ընտելացնել հալալ աշխատանքին... Այդպիսով թերևս մոռա-նան նոքա իրենց վայրագ հակուժները և մի օր զգան, թէ ովքե՞ր են իրենք...

## V.

Կէս-դիշեր էր: Մելիքները դեռ նստած կը խօսէին: Սալիտն ու Ռէսօն էլ (այդպէս էին երկու քիւրտ տղամարդոց անունները) այդտեղ էին և փոփոխակի կրպատասխանէին իրենց գլխին տեղացոյ հարցերին:

— Սալիտ, կը հարցնէր Մելիք Միսաքը, — դու կը յիշե՞ս քո լուսահոգի հօրը — Ալի պէկին:

— Ես դեռ երեխայ էի, քեզ զուրպան,

երբ այն մեծ անբաղդութիւնը եկաւ մեր  
տան վրայ...

Բայց նա չ'կարողացաւ շարունակել:  
Գառն չիշողութիւնները կ'ալեկոծէին խեղճ  
քրդու սիրտը... Նա ուխտել էր խօսք  
չբանալ իրենց «անցեալի» մասին: Բայց  
Մէլիք Միսաքն էր հետաքրքրուողը, որի  
հարցին չ'պատասխանել՝ Նաճարանէն հե-  
ռանալ կը նշանակէր: Մինչդեռ նրանք  
մտադրւել էին մի կերպ մնալ այդ դիւ-  
ղում և մի կտոր հաց ճարել: Նրա ակ-  
նարկած մեծ անբաղդութենէն չէտոյ ոչ  
մի քիւրտ ցեղ իր մէջ չէր պատասպարեր  
քուրմ դիւղացի քրդու: Մանաւանդ երբ  
իմանալին որ սրանք «դաւաճան» Սլի  
Պէկի որդիքն են... օ, հազար կտոր կա-  
նէին նրանց և զաղանի կերակուր կը  
դարձնէին, որ մարդիկ հասկանալին դա-  
ւաճան բառի միտքը... Ուրեմն՝ միակ  
յոյսը հայ դիւղն էր, ուր այդ ողորմելի-  
ները թերևս կարողանալին զլուխները  
դնելիք տեղ ձաշել...

Բայց, սատանի աչքը քօռանայ, նրանց բաղդէն հայ գիւղացիք էլ, կարծես, կը խորշէին նրանցմէ: Ըստ որում շատ հայ գիւղեր մտան նոքա, բայց վաճառեցան: Անողոր ճակատագիրը սև ուրւականի նման ամեն մի քաղաքիսում կը հետեւէր նրանց և խեղճերը դատապարտւած էին կրելու իրենց «հօր սխալ քալի պատիժը...»

Այդպէս հալածական նոքա շատ դռներ բաղխեցին՝ առանց մէկի բացւելը տեսնել կարողանալու: Մինչև որ ի վերջոյ իմացան «Նաճարանի Մեծ Մելիքի» ծասին, որ շատ կը սիրէր «կեսկէսներին» — ինչպէս այդ կողմերում կանւանէին քրդացած հայրերին: Եւ նրանք գիմեցին համբաւաւոր Մեծ Մելիք Միսաքի օճաղը...

— Իսկ դ՞ու, Ռէսօ կը հարցնէր Մելիք Միսաքը միւս քրդուն, որ գեռ այգտեղ էր:

— Ես աւելի փոքր էի, աչքիս լոյսը,

գուցէ Սալիտը կարողանայ պատաս-  
խանել:

Ասաց Ռէսօն և պաղատական չանգով  
նայեցաւ. եղբօրը:

— Ես այսքան գիտեմ, ասաց վերջինս,  
որ իմ հայրը (Աստուած ողորմի հողուն)՝  
մի կտրին տղամարդ է եղել: Իմ հերոս  
հայրը միշտ չաղթել է, որ ցեղի դէմ էլ  
որ նա պատերազմել է (ես այդ ուրիշ-  
ներէն եմ իմացել): Ողորմած հողին շատ  
բարի և հեռատես մարդ է եղել, բայց  
մի քիչ փառասէր: Նա մի անգամ բա-  
րեկամացել է Բալու քաղաքի դայձա-  
գամ Ռիւշտի Պէկին հետ (Ալլահը ճէհէն-  
նէմի փայ անէ անիրաւին ճանր, հիմի էլ  
այդ է գաւառապետը): Եւ երբ Օսման-  
ցուն ուզեց նւաճել Տէրսիմի, Խօանի և  
Իզօլի աշիրաթ-ցեղերին, որոնք չէին ցան-  
կար հարկ վճարել Օսմանցւին,—այդ ա-  
տեն իմ հայրը (ա՛խ, հա՛յր, հա՛յր, ի՞նչ ա-  
սեմ քեզ, հա՛յր...)

Քրդու աչքերը բոցավառեցան աւելի

և աւելի... նա սկսեց անհանդիսա շունչ առնել... Նոյն բանը կը կատարուէր և նրա եղբօր մէջ, որը չ'կարողանալով զրս-պել իր ծաւրաչեղ յուզմունքը՝ մանչաց առիւծի նման, մի հոգեբուզիս հառաչանք արձակեց և գլուխն առաւ ձեռքերին մէջ... Սայիտը շարունակեց.

— Այդ ատեն հայրս կառաջնորդէր թուրքերին Տերսիմցոց և միւս ցեղերին դէմ... Թուրքերը խոստացել էին հօրս փաշայութեան հասցնել և շրջակայքի բոլոր բիւրա ցեղերին վրայ մեծաւոր կարգել... Չի՞ք լինէր այդ տնաքանդ փաշայութիւնը, որ մեզ ներկայ դրութեան չ'հասցնէր... Աշիրաթներն չաղթեցին և հայրս զոհ գնաց Իզուլցոց ցեղապետի մարդակեր սրին... Այնուհետև աշիրաթները քար-քանդ արին մեր գիւղը... Ես լսել եմ, թէ ինչպէս պաշտելի «սէյիտաները անէծք են կարդացել փափազ-օգլ ինների տօհմի գլխին...» Գիտէ՞ք արդեօք, ձեզ զուրպան, ի՞նչ սոսկալի

բան է սէյիտի անէծքին ենթարկելը...  
 «Սէյիտի անիծած տոհմը էլ երբ կարող է  
 իր ճանն ազատել աշխարհի բոլոր չա-  
 բիքներէն և երկնքի դժոխքէն...» Սա-  
 տուած իմ արիւնը խմող թշնամուն էլ  
 չենթարկէ այդ «մեծ անբաղդութեան...»

Ըստ երեւոյթին քիւրտը կուղէր կա-  
 բելի եղածին չափ սառնութեամբ պատ-  
 մել, բայց այդ չէր չաջողէր նրան. նա  
 լանախ կը յուզէր և այդ պահուն նրա  
 անյողողող ձայնը կոկորդումը կը խղրղ-  
 ւէր: Սակայն այնուամենայնիւ, քանի որ  
 այդքան «բացւեցաւ», պէտք էր շարու-  
 նակել և նա ասաց.

— Մեր տան կառավարութիւնը, այդ  
 կռիւների ընթացքում, չանձնւած է եղել  
 իմ քեռի Մըստօին, որը շատ թույլ մարդ  
 է եղել: Զարմանալի՞ մարդ, զէնք դոր-  
 ծածելու անգամ շնորհք չէ ունեցել, վա-  
 ոօղի ծխէն ու շէկ պողպատէն նապաս-  
 տակի նման վախնալիս է եղել... Ինք  
 ասէք, ձեզ զուրպան, այդպէս անհողի

մարդը ե՞րբ կարող է տուն պահպանել,  
այն էլ առիւծանման աշիրների դէմ...  
Եւ Մըստօն ինկաւ՝ առաջին իսկ չար-  
ձակողի տէգէնս Այդպէս էլ պէտք էր,  
չէ՞, Մըստօի նման թոյլ արարածներին...

Մելիքները լարւած ուշադրութեամբ  
կսէին նրան: Աշխարհումս ոչինչ այնքան  
չի ոգևորեր քրդուն, սրքան կտրի՛ն քրդու  
քաջագործութիւնների նկարագրելը և  
թոյլերին պախարակելը: Անլեզուն ան-  
գամ, նրանց մէջ, այդ դէպքերում լեզու  
կելնէ և ինչպէ՛ս...

— Իսկ մայրիկդ— Զուճրութ հանու-  
մը ինչ եղաւ, հարցուց նորէն Մելիքը:

— Զուճրութ հանումն էլ (ա՛խ... մայրիկ  
նա՛ն, սուրբ կաթիլ փոխարէն թոյն կեր-  
ցրնէիր մեզ, որ այս օրը չ'տեսնէինք...)  
աներևութացա՛ւ... Ոչ ոք չ'զիտէր ինչ  
եղաւ խեղճը. մարդիկ չետոյ իմացան  
«չար խապարը տեղ չ'մնար», որ մայրիկս  
թշնամու ծեռքն էր ինկել: Իվոլցոց ցե-  
ղապետը չանձնել էր նրան իրենց սէլի-

տին, որը փառքով ու պատուով պահելիս է եղել իր տանը: Բայց Մայրիկս այնտեղ շատ քիչ է ապրել...

Այդտեղ ընդհատեց Սալիտն իր պատմութիւնը, որովհետեւ արտասուքը կը խեղդէր նրան և նա այլ ևս անկարող էր շարունակել: Իսկ ասած, քրտերն այդ կողմից լաւ են ձեղձէ, ծնողասիրութեան զգացմունքը նրանցում խիստ գորեղ է, տյնպէս որ քիւրտ տղամարդը յամենայն դէպս պատրաստ է թէ կուղ իր կեանքը գոհելու՝ իր (չօր և մօր թանգազին խաթեր և յաւէտ անմոռանալի չիշատակի համար... որովհետեւ ծնողասիրութիւնը մարդկային առաքինութիւններէ զլխաւորն է և այն որդին, որ չի սիրել իր ծնողքը՝ նա մէկ խօսքով մարդ չէ... Շունն էլա կրսիրէ իր մօրը...»:

Երկու եզրայրները երեխի նման կուլային՝ իրենց հետ լացնելով միաժամանակ թէ՛ Մելիք Միսաքին և թէ՛ նրա համշիրակ հիւրերին:

Յայտնեցաւ, որ Զուժութ հանուժը  
 մեռել էր գերութեան կապանքների մէջ՝  
 հեռու իր սիրելիներէն, հեռու իր հայրե-  
 նի և ընտանեկան օճաղներէն, որ աւերակ  
 էին դարձած... Նա մեռաւ՝ չիշելով իր  
 ծագումը և անիծելով իր անբաղդութեան  
 բոլոր հեղինակներին, անիծելով այն ըստ-  
 թուկներին որոնք լծկանի կեանքը ազա-  
 տութեան նանսպարհի վրայ հերոսաբար  
 իջնալէ կը գերադասէին...:

## VI.

Թըթխմորը ինքնըստինքեան մի փոքր  
 բան է, բայց նա ընդունակ է մակարգելու  
 մի ամբողջ տաշտ խմոր ու նրա վրայ  
 «համ բերել»: Սյդպէս է և դադափարա-  
 կան, գործելու եռանդ ու պատրաստա-  
 կանութիւն ունեցող մարդը: Սա թէև  
 մի անհատ է միայն, բայց կարող է վա-  
 րակել ամբողջ դասակարգեր ու զազափա-  
 րական համ բերել նրանց վրայ: Սյնպէս

որ այսօրւան քարացած, բարոյապէս մե-  
ռած հասարակութիւնը՝ վաղը-միւս օր  
կարող է՝ մարդկային թթխմորի—ազնիւ  
դադափարականի գործունէութեան ազ-  
դեցութեան շնորհիւ բոլորովին կերպա-  
րանափոխել, վերակենդանանալ և դառ-  
նալ մի համակրելի տարր... Եւ այդ այն  
պատճառով, որ ազնիւ Գաղափարը վա-  
րակիչ առողջութիւն է!

Ասածիս իբրև ապացոյց կը բերեմ հե-  
տևեալ՝ իրական կեանքէ վերջրած փաս-  
տը, որ անմիջական կապ ունի «Քիւրա  
Պէկի» պատմութեան ընթացքին հետ:

Մ ա լ խ ա ս - ա ղ ա ն կ ա մ Պ ա ր ո ն  
Թ ա փ ա ո ա կ ա ն ը Տ ա ն կ ա - Ն ա յ ա ս տ ա ն ի  
Կ. քաղաքի համբաւաւոր Հայ հարուստ X.  
ի որդին էր, որ շնորհիւ նիւթական ա-  
պահովութեան և իր արտասովոր ընդու-  
նակութեան հնարաւորութիւն ունեցաւ  
անցնիլ Ռուսաստան և կարճ ժամանակի  
ընթացքում պատրաստուելով՝ մտաւ մի  
անւանի համալսարան: Այստեղ փալլուն

չաչողութեամբ աւարտելով ուսման ընթացքը՝ ժամանակակից դարի հողուն համապատասխան եռանդով տոգորւեց իր տարաբաղդ արիւնակիցներին ծառայելու գաղափարով: Եւ նա՝ բեռնաւորաժ Քրտութեան բաւական հարուստ պաշարով՝ վերագարծաւ Մայր-հայրենիք, ուր տեսաւ իր օճաղը քանդւած բարբարոսութեան աւերիչ նանկերով...:

Նրա հայրը՝ բանտի խորքերում, շղթաների ծանրութեան տակ իր ամբողջ կարողութեան լրբաբար զրաւելուն ականատես, իր ընտանեաց և ճանաւանդ միակ դարիպ որդու քաղցրիկ տեսութեան կարօտ-հողին աւանդած էր...:

Մայրը նոյնպէս՝ չղիմանալով անողոր ճակատազրի քայքայիչ հարւածներին՝ հիւժւեց օր-աւուր և առանց իր «անուշ պալաչի» երեսը տեսնելու բողդին արժանանալու փակեց իր աչքերը՝ օտարի դրանը թողնելով իր երկու անչափահաս աղջիկներին...:

Վերջիններին աւելի լաւ բաղդ վիճակ-  
 ւած չէր, քան իրենց ծնողացը: Երէկւան  
 փափուկ, նազելի արարածներն այսօր  
 դառել էին «չտես օտարի գերօւհինները  
 և ստիպուած էին ծառայել նրանց... Մին-  
 չև որ ժամանակէն առաջ վիճակէց նրանց  
 վերջնականապէս պատկանիլ մի-մի արիւ-  
 նակից երիտասարդի, որպէս ամուսին...:

Մի Խօսքով Կ.-ում չէր մնացած մի  
 բան, որ Մալխասին չիշեցնէր իրենց նախ-  
 կին փայլուն հասարակական դիրքը, բա-  
 ցի իրենց նախկին տնէն, որ կը շարու-  
 նակէր մնալ կանգուն և որը, սակայն,  
 այժմ մի թուրքի օրինաւոր սեպհակա-  
 նութիւնը (\*) կը կազմէր:

Միւս կողմէն համոզւած լինելով, որ  
 «Մարգարէ չիւրում գաւառի պատիւ ոչ  
 ունի», նա վճռեց անցնիլ Չորրորդ հալք,  
 որտեղի հայերն էլ Կ.-ի նման ընկղմւած  
 էին թանձր խաւարի մէջ, և հետեւաբար,  
 Լոյսի մեծ կարիք կար այնտեղ:

Հրաժեշտ տալով իր թշւառ ծննդա-

վայրին՝ Նա Քղիի վրայով անցաւ Բալու  
և այդտեղ էլ հիմքը ձգեց իր եռանդուն  
գործունէութեան:

— Ճանչնալ ինքնիրեն, տեսնել իր վեր-  
բերը, տեղի չ'տալ փաած հասկացողու-  
թիւնների և պատերազմ հրատարակել  
ստրկական լռութիւն ստեղծող երեւոյթ-  
ների դէմ: Ս.հա Պ. Թափառականի ամ-  
բողջ քարոզութիւնների բովանդակու-  
թիւնը Բալուում և Բալուի շրջակայ հայ-  
արնակ գիւղերում:

Թէ որքան խոչընդոտների պէտք է  
հանդիպէր այդ քարոզութիւնների հեղի-  
նակը.—այդ հասկանալի է: Բայց Պ. Թա-  
փառականը այնպիսի երկաթի հաստա-  
տակամութեան տէր մարդ էր, որ առ  
ոչինչ համարելով այդ բոլոր խոչընդոտ-  
ները՝ նա անշեղ առանջ կնխանար իր  
ընդգծած շաւղով: Մինչև որ մարդիկ ելթէ  
ոչ համակրիլ, գէթ երբեմն լսել սկսէին  
նրա կենդանի խօսքերին:

Իհարկէ, որքան էլ որ փչացած լինի

մի հասարակութիւն՝ դարձեալ նրանում կը գտնւին անհատներ-գլխաւորապէս շահագործող զտսակարգէն-որոնց համար հանելի կը լինի շահագործողների դէմ ուղղւած բողոքի այս կամ այն կէտր: Իսկ Պ. Թափառականին առաջուց այդպիսի անհատներ էին հարկաւոր, մինչև որ նա «հասարակութեան մէջ ոտքի տեղ շինէր»...:

Ահա այդ կարգի անհատներէ մին էր և Մելիք Միսաքի Սրամ անունով որդին՝ իր ձափահիր (Գոհար) քրոջ և համադիւպացի մի քանի երիտասարդների հետ: Սրանց թէև առաջին անգամ շատ խորթ, շատ տարօրինակ ու մինչև իսկ անիրագործելի ցնորքներ երևցան Պ. Թափառականի արծարծած մտքերն ու բոլոր քարոզութիւնները, բայց ժամանակի ընթացքում չաճախ շփուելով նրա հետ և կամայ-կամաց ծանօթանալով նրաներքին աշխարհին՝ սկսեցին հասկանալ

Նրան: Իսկ նրան հասկանալ-կիսով չափ  
կազմակերպւել կը նշանակէր:

Այսպէս թէ այնպէս ուշադրաւ էր այն  
երևոյթը, որ երբ Պ. Թափառականը մի  
քանի օրով կը բացակայէր Նաճարանէն՝  
նրան համակրողները կսկսէին անհանգրս-  
տանալ: Եւ այդ բոպէներին էր, որ պարզ  
կերէէր աղաա խօսքի նրանց վրայ թո-  
ղած հրաշալի ազդեցութիւնը....:

Նրանք թէև անտաշ, կոպիտ՝ բայց և  
թանկագին ատաղձներ էին, որոնցմէ հր-  
մուտ վարպետ Պ. Թափառականը պիտի  
շինէր ապագայում խիստ տոկուն, նստ-  
տակաչարմար գործիքներ՝ հասարակական  
կեանքի խախուտ շէնքը վերանորոգելու,  
պիտանի դարձնելու գործում անհրաժեշտ  
եղող:

Բալու քաղաքէն և շրջակայ շատ հա-  
չարնակ գիւղերէ աւելի բազմաւոր էր  
Նաճարան գիւղը, որտեղ Պ. Թափառա-  
կանը կալոզացաւ իրեն օտքերին համար

տեղ շինել՝ համեմատաբար աւելի կանուխ  
և աւելի լայն ծաւալով:

Այ՛ո, բաղդաւոր էր Նաճարան զիւղը  
և այդ կը տեսնենք մենք «Քիւրա Պէկի»  
պատմութեան ընթացքում...:

## VII.

Երեկոյեան մեզ ծանօթ հարցութիւններ  
մի օր չեսոյ Մէլիք Միսաքը կանչեց իր  
ձօռ Արամին-իր որդուն և պատուիրեց,  
որ քրդերին իր հետ դաշտ տանէ և  
զրսեցի բանւորներ ի կարգին գործի գնէ,  
որ աշխատին:

— Հայրիկ, ասաց Արամը՝ մի քիչ մը-  
տաճելէ չեսոյ, — եթէ ես լինէի քո տեղը՝  
չէի ընդուներ այդ քրդերին և իսկոյն կը  
հեռացնէի մեր գիւղէն:

— Ինչո՞ւ, Արամ:

— Հէնց այնպէս...

— Բայց, սիրելիս, չընդունելու մի  
պատճառ պէտք է:

— Բաւական է, որ զրանք քրդեր են, նրանց թէկուզ ծառայութիւնը շատ թանգի կարող է նստել մեզ վրայ իմ կարծիքով...:

— Բայց մի ծոռանար, Արամ, որ զրանց չ'պէտք է դասել իսկական քրդերի կարգը, որովհետեւ սրանք հայկական ծագում ունին և վաղ թէ ուշ պիտի ձուլւին մեզ հետ... Պէտք է պահպանել այդ պիսիներին...:

— Իսկ իմ կարծիքով զրանք նոյնքան և աւելի վտանգաւոր քրդեր են, որքան բուն քրդական ծագում ունեցողները, որովհետեւ «զինուց դարձած բացախը բարկ կը լինի...» Կրտսենե՞ս ենիչէրիններին, ինչե՞ր կանեն,— զրանք էլ հայեր, կամ յոյներ, մի խօսքով բրիտտոնեաներ էին, իսկ այժմ դարձել են մի-մի գերեզման բրիտտոնէական պատւի...:

— Որդի նան, շատ եշմարիտ կասիս, բայց Վէրտան-Չատէները ակամայ տոհմափոխների առաջին սերունդն են: Այդ

սպատնառով էլ նրանց կեանքում զեռ  
շնտ բան կա՞ց հաշկական... Մեր կողմէն  
ձի փոքր խնամատարութիւն ու սիրա-  
լիրութիւն բաւական կը լինի, որ նորա-  
ձուտ բոլոր գծերը կերպարանափոխին  
դրանց կեանքում և տեղի տան հաշկա-  
կանին... Հասկանալի՞ է աչդ հանդամանքն  
էլ թէ չէ...

— Ձե՞մ կարող համաձայնիլ բեզ հետ,  
հ սչր, որովհետեւ եթէ կամենանք նշանա-  
կութիւն տալ հաշկական սովորութիւն-  
ների մնացորդներին քրդերի կեանքում,  
հազի՞ւ թէ կարելի լինի մատնացոյց լի-  
նել ձի քրդու վրայ, որի կեանքը, մեծ  
թէ փոքր չափով հաշկական դրոշմ չ'կր-  
բէր իր վրայ, լինի դա նախկին, թէ տաս-  
ներորդ սերունդը—միեւնոյն է...

— Կարճ կապենք, Արամ,—փոխեց  
Մելիքը խօսակցութեան եղանակը,—ինչ  
էլ լինի՝ ես վճռել եմ պահել զրանց: Ու-  
րե՞մն, զնա՞, և ինչ որ կասե՞մ՝ արա՛...  
— Ինչպէս մինչև այսօր՝ նոյնպէս և

այժմ պատրաստ եմ կատարելու քո հրամանները: Բայց կը մտածեմ, թէ մի՞ գուցէ չետոյ զղջանք, որ ապերախտ օձերին տաքացրել ենք մեր ծոցում...

— «Քիւրան իր խմած աղբիւրի ակը քար չի ձգեր», այդ առածը Մելիքը այնպիսի մի շեշտով արտասանեց, որ Սրամին միայն հնազանդել կը մնար:

Վերջինս հոգւով չափ տխրած՝ շշնչաց.

— Հայր, ահա կերթամ պատուէրդ կատարելու, սակայն թող տուր վերջին անգամ նկատել, որ դա ոչ-ցանկալի հետեւանք պիտի ունենայ...

— Կորսէ՛ ներկայութենէս... շունշանորդի...

Գոռաց Մելիք Միսաքը սաստիկ բարկանալով Սրամի վրայ, որ կը համարձակէր չամսոխի իր կարծիքին վրայ: Միթէ այդ կողմերում հայ երիտասարդն իրաւունք ունէր սեպհական կարծիք ունենալու և նրան պաշտպանելու, միթէ ներելի՞ էր որևէ երիտասարդ զաւկի, որ

«դիմադարձութիւն անէր իր հօր խօսքերին դէմ»... Ոչ! ինչպէս այժմ, նոյնպէս և հնումը այդ կողմերում հայ-երիտասարդութիւնը այս կամ այն հարցում որ և իցէ ձայն ունենալու իր աւուներէն զուրկ էր: Եթէ, զիցուք, հայրը որդուն զրկէր զետր՝ խղզւելու համար—որդին պարտաւոր էր անտրտունջ (ըստ նրանց՝ «առանց դիմադարձութեան») կատարել այդ անմիա, կորստարեք հրամանը...

Այդ պատճառով էլ, քանի զեռ Պ. Թափառականին համակրողների թիւը սահմանափակ կը մնար, Արամն ակամայիցս պէտք է հնազանդէր...

Եւ նա լռեց և դուրս զնաց հօր մօտէն...

### VIII.

Պէտք էր տեսնել, թէ որքան ուրախացան Սալիան ու Ռէսօն, որքան օրհնեցին

Մէլիք Միսաքի օրն ու արևը, որքան «օդորմիս կարգրցին Մենծ Մէլիքին մեռ-  
ճուուն, ճինսին ու սիլսիլէյին հողուն», —  
երբ Արամն չաչանեց նրանց, որ դործի  
պիտի դրէին իրենց միւս բանւորների  
կարգին:

— Ա՛հ, ազա, հողուղ զուրպան—գո-  
չեցին երկու եղբայրները միաբերան,—  
մենք վարձատրութիւն չենք խնդրեր,  
բաւական է՝ փորերս կշաանայ և «ան-  
չուլ» չի մնանք: Եւ նոքա վեր առին  
հարկաւոր զործիներն ու գնացին դործի:  
Հապա աշխատե՛լը: «Մէյմէկ զահրի-  
ման էին կտրած»: Այնպէս եռանդով,  
անզուլ և անձանձորոյթ կաշխատէին, որ  
«տեսնողը լեզուն կը խածնէր»...

Առաւօտուն, կէսօրին և յետինքին (ի-  
բրինաի), երբ միւս բանւորներն հացի կը  
նստէին՝ մեր հերոսները զեռ մի քիչ էլ  
կաշխատէին, ապա կը նստէին և դար-

ձեռք միւսներէն վաղ վեր կը կենային զործի գլուխ: Շատ անգամ էլ «լեռինքի հացին» երբէք չէին նստեր նրանք, այլ կամ մի պատառ ցամաք հաց առնելով՝ միաժամանակ թէ՛ կուտէին և թէ՛ կաշխատէին, և կամ «Մենք անօթի չենք» ասելով՝ զործերն անընդհատ կը շարունակէին:

— Մեր աղաչ, շարժի՛ր—կասէր Սալիար իր եղբորը՝ երբ առանձին կը մնային,—«զործէն կրակ հանէ», որ կեամբուրների աչքը բաց մնայ...» Այնպէս անենք, որ այդ անհաւատ քաւթաուր (Մելիք Միսաքը) ոտով ձեռքով կպչի մեզ... Մինչև որ «չուրն առուն իջնայ...» Այնուհետև հեշտ կը լինի մեր բանը, այնուհետև կը գիտենանք մեր անելիքը... Այնուհետև կեցցեն Փափազ-օղլիների բռունցքները...

— Այո՛ շարժելի՛նք—կը պատասխանէր Ռէսօն հէզնօրէն,—որպէս զի մեր տէրը (?) հաւնի ու զօվէ մեզ, որ մեր նման բանւոր գեռ մտած չէ իր տունը...

## IX.

Եւ, իրօք, «կեալուորների աչքը բաց կը մնար» (կը զարմանային) տեսնելով քրդերի հողւով-սրտով զործի նայելը: Մեկիք Միսաքը միշտ հիացած կը պատմէր իր խօսակիցներին, որ կէսկէսների նման հալալ աշխատող ոչ մէկը չունի իր հարիւրաւոր բանւորներին մէջ:

Քրդուհին էլ անգործ չէր մնար: Նա մեծ եռանդով կը մասնակցէր զեղջկուհիների բոլոր դաշաային պարապմունքներին:

Համուզները, հօ, Աստուծոյ խնամքին էին յանձնուած: Մինչև իրկուն քաշ կը գային աղբակոյտներին վրայ, խոնկորների նման, և երեկոյեան ուշ ժամանակ տուն վերադառնալով՝ Մեկիքենց սեղանի փրշորանքով (որով մի քանի տասնեակ մարդիկ կարող էին կերակրուել) փորերը կը կշտացնէին ու «չարտախի» մի անկիւնում կողք-կողքի տւած կը խռմփացնէին,

առանց ամենեւին տեղաշարի կարիք զգա-  
յու: Նոյն խի նրանցմէ մին ամենամեծը  
— հօտաղներին հետ անտառ կը գնար և  
կօգնէր նրանց: Այգպէս ու թ հողուց բազ-  
կացած այդ ընտանիքը ոչ ոքի վրայ մա-  
ղաչափ բեռ չէր լիներ: Բացի այդ՝ Մե-  
լիբէն որեւէ վարձք ստանալէ էլ հրաժար-  
ւեցան:

— Ձեր հողին սաղ մնայ, կասէին Մե-  
լիքին, — չերիք է, որ ձեր տան չարկի  
ներքև ապաստան կը գտնենք և անօթի  
ու մերկ չենք: Աւելին չենք ուզեր:

— Այգպէս բան չիլինիր, ասաց Մե-  
լիքը — «Բանւորը պէտք է իր աշխա-  
տութեան վարձքն ստանայ լիովին, որ  
գործին ու արդիւնքին մէջ էլ պէրէքէթ  
(լիութիւն) իջնայ»: Ձէ՞, որ եթէ դուք  
չ'լինէիք՝ ձեր տեղ պէտք է ուրիշներին  
վարձէի և հախերը ապի, ուրեմն ան-  
հրաժեշտ է, որ դուք ընդունիք նախօրոշ  
վարձապնեղ: Ինձմէն առէք ու, տարէք,  
թէ կուզ, ծովը նետեցէք, — այդ ձեր գործն

է, միայն՝ չասեն թէ Մելիք Միսաքը աղքատ մարդոց «հախը կերաւ...»

— Մենք մեզ լիուլի վաճապորւած կը համարինք, երբ ձեր ժպտուն զէմքին կը նայինք և երբ կը տեսնենք, որ դուք ոչ որպէս «աղա», այլ որպէս հայր կը նայիք մեզ ու մի բանի կարօտութեան մէջ չէք թողներ մեզ:

— Բայց եթէ վեռել էք—կաւելցնէին նորա,—որ անպայման դրամով էլ վաճապորէք մեր աննշան աշխատութիւնը՝ ապա կը խնդրենք, որ մեզ հասնելիք դրամը դանձէք ձեզ մօտ: Թող աւելանայ: Մինչև որ մի առանձին գործի ձեռնարկելու համար բաւականաչափ դրամադլուխ գոյանայ, այն ատեն կառնենք և ձեր շնորհիւ մի փոքրիկ սեփհական գործ կսկսինք:

— Այդպէս կարող է լինել, կը համաձայնէր Մելիքը և սրտանց կուրախանար, որ ապագայում հալալ աշխատանքի ձեռնարկելու կը տրամադրուին քրոյերը:

— Այդ լաւ նշան է, կը մտածէր նա, —  
 րնդամենը երկու տարի է, ինչ սրանք  
 մտել են ինձ մօտ, և հասկացել են ար-  
 դէն՝ հալալ աշխատանքով, ճակտի քրը-  
 տինքով հաց ճարելուն առաւելութիւնը,  
 փոխանակ դողութեան և աւաղակութեան  
 հետամուտ լինելու...

Մելիքի կարծիքով Սրամբ շատ-շատ  
 կը սխալէր, կարծելով թէ՛ այդ քրդերը  
 միայն ձախող հանդամանքների բերմամբ  
 համակերպել էին արդի դրութեան հետ.  
 Թէ ստիպւած էին նոքա համակերպելու,  
 թէ երբ «Հանդամանքները կը բարեփոխ-  
 ւէին» նրանք պիտի դառնային սոսկ ա-  
 ւազակաբարոյ քրդեր... Բայց ինչ էլ լի-  
 նէր, այժմ ակներև էր այս բանը, որ  
 քրդերն ամենալաւ բանւորներ էին և «ոչ  
 ոքի հաւին քը՛շ չէին ասեր»: Մելի-  
 քին էլ այդ էր հարկաւոր՝ համոզւելու  
 համար, թէ զրանք տեղի պիտի սս-  
 չին սխալեմաթիք մերձեցման և, վեր-  
 շապէս, պիտի ծուլէին հայերի հետ...

Այդ պատճառով էլ նա, Մելիքը, ամեն կերպ կաշխատէր դուր զալ փափաղ-օղլիներին, զրաւել նոցա սրտերը և միով բանիւ այս համոզման բերել նրանց, որ ինքը՝ Մելիքը՝ պատրաստ էր օգնելու նրանց, ե՛րբ, ինչով և ի՛նչ կերպ էլ կամենային քրդերը:

Միայն թէ՛ Մելիքի երազն իրականանար...

## X.

Փափաղ-օղլիների ծառայութեան երրորդ տարւայ գարնան մի օր Սալխար ներկայացաւ Մելիք Մխաթին և ասաց նրան.

— Աղա, բեզ զուրպան, կը խնդրենք որ մի քանի օրավար հող աաս մեզ վարձու, որպէս զի մեզ համար առանձին մի գործ սկսինք և մի կտոր հաց ճարենք:

Եթէ զիտենայիք՝ օրքա՛ն ուրախացաւ Մելիք Մխաթըր, լսելով քրդու խնդիրքը:

Նա կը տեսնէր, որ այդ 2—3 տարւան  
ընթացքում քրդերը անմիջական շփման  
ծէշ լինելով հաշերի հետ՝ խորապէս աղդ-  
ւել էին նրանցմէ և այժմ ինքնաբերաբար  
հող կը խնդրէին, երկրագործութեամբ  
պարապելու համար: Եւ նա դառնալով  
քրդուն՝ ասաց.

— Շատ լաւ, Սաչիտ, վաղը ես կը  
կարգադրեմ ամեն բան: Քիւրտը հեռա-  
ցաւ խոր դուխ տալով: Իսկ Մելիքը  
կանչեց իր մօտ Արամին և ասաց.

— Տեսա՞ր, որդի՛ քեզ չէի՞ ասեր, որ  
այդ քրդերը վերջիվերջոյ պիտի զգան հա-  
լալ հացի քաղցրութիւնը և ձեռք պիտի  
բաշեն իրենց վատ կրքերէն:

— Ի՞նչ կաչ որ, հարցուց Արամը դառ-  
նութեամբ՝ զուշակելով հօր հաղորդելիքը:

— Այսօր Սաչիտը մի քանի օրավար հող  
կը խնդրէր՝ առանձին գործելու համար...

— Եւ դու էլ խոստացա՞ր, այնպէս չէ՞,  
միշահատեց Արամը՝ ամբողջ մարմնով դո-  
ղալով...

— Յիմար պիտի լինէի, որ մերժէի...  
 Ի՞նչպէս կարելի է չուրախանալ և չկա-  
 տարել նրանց խնդիրքը, երբ կը տեսնես՝  
 ձարդիկը կուզեն իրենց պարէնիկն հաշ-  
 թայթել ճակատի քրտինքով... Մատ շան-  
 ցած՝ դու կը տեսնես, թէ ինչպէ՞ս կը  
 հպարտանան նոքա իրենց աշխատութեան  
 պատշններով և կը ձգտին կենդանի օրի-  
 նակ հանդիսանալ իրենց նման շատերին  
 առջև... Ու այդ ամենի պատճառը մենք  
 եղած կը լինինք...

— Ախ, հայր, հայր, շշնչաց Սրամբ,  
 խօր հառաչելով,— կը տեսնեմ, որ քո ծաշ-  
 րայեղ լաւատեսութիւնը մեզ պիտի ան-  
 բաղդացնէ... Ախար ես չեմ կարող հաս-  
 կանալ՝ այդ քրդերն ինչո՞վ արժանի են  
 մեր կարեկցութեանը, որ մենք պէտք է  
 սիրով տեղ տանք նրանց ու զուտ հաշա-  
 րնակ մեր զիւղի սահմաններում մի քիւրա  
 րնտանիք պատասպարենք... Գուցէ նրանց  
 հաշացնելու երա՞զն է քեզ ողևորողը...  
 Ահ, թող մենք զիտենանք մեր հարա-

դատներին օտարութեան եիրանք չրժը-  
գելի,—այդ բաւական կը լինի մեզ հա-  
ճար... Կամ միթէ քի՞չ կան մեզանուձ  
այնպիսի անարատ հաչեր, որոնք աղքա-  
տութեան գրկուձ հողիները կաւանդեն...  
Մենք թողաձ այդպիսի հարազատ արիւ-  
նակիցներին անգութ ճակատագրի կամ-  
քին՝ կուզենք մեր արիւնք ճձող բարբա-  
րոսներին բարիք անել: Մեզ պէտ չեն,  
հայրիկ ճան, պէտք չեն այդ քրղերը...

— Զձոռանամ այս էլ ասելու, աւե-  
լացրեց նա,—որ դու դուցէ ի նկատի  
ուձիս նրանց աշխատասիրութի՞ւնը, որ  
դոքա այս երկու տարի է՝ լաւ կաշխա-  
տին մեզ ձօտ: Սակայն պէտք է գիտե-  
նալ, որ նոքա ստիպւած էին այդպէս  
լինելու...

— Ինչո՞ւ էին ստիպւած:

— Սհա թէ ինչո՞ւ: Նախ որովհեաւ  
նրանք քիւրտ ցեղերին դիմել չէին կա-  
րող, քանի որ «դաւաձանի» որդիքն են,  
որոնց սպանելու սրբազան պարտակա-

նութիւնը կիյնայ ամէն մի նշմարիտ քրդու վրայ (քրդերի օրէնքն է այդ, որ դու ինծմէն էլ լաւ գիտես): Երկրորդ՝ ուրիշ հայ գիւղերէ յոյսերը կտրած էին, որովհետեւ որ հայ գիւղն էլ ծաան՝ վաճառեցան (այդ բանը ձափահիրն իմացել է Սալիաի կնոջմէն): Երրորդ՝ այդ քրդերն համողւած էին, որ քո ծեռքի տակ մնալով ու լաւ աշխատելով՝ մի օր պիտի օգուէին քո դիւրախարութենէն և իրենց համար մի հաստատուն գիրք պիտի ստեղծէին, որմէ յետոյ, ես համողւած եմ զբանում, ցոյց պիտի տան մեզ իրենց բնգարոյս կրքերը...

— Բայց, Արամ, եթէ երբէք ես չափազանց լաւատես ու դիւրախար եմ, դու էլ չափազանց կասկածոտ և ամեն քունն ու պուճախում չեաին մտքեր որոնող բնաւորութիւն ունիս... Ուրեմն պէտք է միջին ճանապարհն ընտրենք...

— Ի՞նչ կը նշանակէ «միջին ճանապարհ», ընդմիջեց Արամը:

— Այս, որ պէտք է կանչել մեր զիւղի խելահասներէ աջնպիսի մէկին, որը վիճելի հարցում ոչ մի մաղաչափ շահ կամ վնաս չունենայ, և նրա խորհրդին դիմենք:

— Այս խելացի առաջարկութեանդ դէմ չեմ ես սկզբունքով—եթէ երբէք ներելի է Նանարանցի երիտասարդին ըսկզբունքի տէր լինել, — սակայն վիճելին մի աջնպիսի հարց է, որ իմ կարծիքով, ոչ թէ մաղի՝ այլ Մասիս սարին չափ վնաս ունի մեր զիւղի իւրաքանչիւր մարդուն, որով ոչ մի՛ կարգին, զիւղի օդուտը մտածող մարդ մեզ խորհուրդ չիտար պահել այդ քրդերին մեր հայաբնակ զիւղի սահմաններում:

Բայց... Մելիքն, յանկարծ, զգաց, որ ինքը դէմ կը գնար զարաւոր սրբազործւած սովորութեան՝ իր որդու «խօսքը չանի դնելով» (կարծիքը չարգելով): Դա սրբապղծութիւն էր, իրաւ որ...

Թէև միւս կողմէն Մելիքը կզգար, որ

երիտասարդների կարծիքն էլ, զատողութիւններն էլ կարող էին երբեմն բանի պէտք դառնալ։ Սակայն ցաւալին այն էր՝ ըստ Մելիքի, որ «այդպէս նաչիլ-ճուլուլի խօսքը չենի դնելով՝ առիթ կուտանք համազիւղացի երիտասարդներին քմբոստանալու և ինքզինքնին մեծ-բանի տեղ սեպելու»...

Եւ նա դարձաւ Արամին այս խօսքերով.

— Այժմ և եթ զնա՛ դաշտ և միջակ հողերէն 10 օրավար տեղ ընարէ Փափաղօղլիներին համար, որոնցմէ մին հետզ կուգայ։ Սովորական զինը չայանէ նրանց, որ այսչափով կը վարձուի տարեկան մի օրավար միջակ վարելահող։ Ապա այդ 10 օրավար հողի չորս կողմը նշաններ տրնկելով՝ կը վերադառնաս ինձ մօտ։

Մելիքն այնպիսի վեռտկան շեշտով արտասանեց վերջին խօսքերն որ Արամը բանի էութիւնն իսկոյն հասկացաւ ու որտի մօրմօքմամբ դուրս գնաց հօր մօ-

տէն: Նա քրդերէն ծին հետն առնելոյ՝  
 դաշտ դնաց իր հօր պատուէրը կատարելու:  
 Իսկ Մելիքը գեռ երկա՛ր կը մտածէր  
 իր ծրագիրներն ի վրայ և երբեմն էլ կը  
 չիշէր Արամի այդ օրուայ չայտնած ճշտ-  
 քերք:

— Գէշ չասեր տղան—կը մտածէր Մե-  
 լիքը Արամի մասին, — Բայց շատ է միա-  
 կողմանի և երկչոտ, այնպէս որ կը կար-  
 ծէ, թէ մի քիւրա ընտանիք կարող է  
 վնասել ամբողջ 300 տուն հայ ունեցող  
 Նաճարան դիւղին... Մինչգեռ եթէ այդ  
 ընտանիքը իր բոլոր էութեամբ կրակ էլ  
 լինի՝ Նաճարանի մի մաղն էլ չէ կարող  
 խանձել... Իսկ անդին ի՞նչ ծրագիրնե-  
 րը... Ո՛չ, Նա գեռ երեխայ է: Ես դիտեմ  
 ի՞նչ գործը...

## XI.

Միւս օրը քիւրա ընտանիքը Մելիք  
 Միսաքենց անէն փոխադրեցաւ դաշտ

և որոշւած 10 օրավար վարելահողին վրայ մի գետնափոր խրճիթ շինելով՝ ըսկսեցին բնակւել այնտեղ:

Երէք տարւան ծառայութեան ընթացքում քրդերը բաւական մեծկակ մի գումար էին չեա ձգել, որով նոքա սկսեցին հոգալ իրենց անհրաժեշտ կարիքը: Նախ Մելիքէն գնեցին մի զոյգ եղ ու մի աբօր իր պարագաներով՝ վարձած հողերն հերկելու համար: Ապա մի կթի կով՝ «ճացի թացան» ունենալու համար: Նրանց կը պակասէին երկրագործական մի քանի ուրիշ՝ նահապետական, ամենապարզ գործիներ-ցաք, մանգաղ, փետատ, երկժանի ևն,—որոնք ձրիաբար ձեռք բերին ողորմած Մելիքի տնէն: Այնուհետև մեծ եռանդով ձեռք զարկին գործի:

Բաղդը կը ժպտար նրանց և նոքա օրստօրէ կը բարւոքէին իրենց անտեսական վիճակը: Այնպէս որ՝ յաջորդ գարնան նոքա ոչ միայն ուրիշին չէին կարօտեր այս կամ այն երկրագործական ա-

ուարկային համար, այլ և վարձած հողերը կրկնապատկելու կարիք զգացին: Այժմ արդէն 3—4 քիւրտ ծառաներ ունէին նորա և մի զոյգ եղի փոխարէն 3—4 զոյգ...

Մի առաւօտ Սալիտը դիմեց Մելիք Միսաքին և խնդրեց, որ որոշ ժամանակով 20 օրավար էլ հող տայ իրենց վարձու...

— Մելիք, կասէր Սալիտը,— «Ասարւած ապի լինի ձեզմէն». մենք ձեր շնորհիւ մի պատառ հալալ հացի տիրացանք և, երևի, դեռ երկար պիտի վայելնք ձեր հայրական խնամքն ու շնորհները... Տեսնելով որ՝ հերու գործերս չաչող գնաց և մշակած ծխախոտներս լաւարդիւնք տւաւ, երկու եղբայր խորհրդակցելով որոշեցինք՝ այս տարի մի քիչ քնդարձակել գործերս: Այդ պատճառով եկել եմ ձեզ մօտ խնդրելու, որ մեր վարձած հողին կից եզոյ հողաբաժիններէն 20 օրավար էլ տեղ տաք մեզ վարձու,

որով «շատ-շատ շնորհակալ կը լինինք»:

Մեկիքը կատարեց նրանց այդ խնդիրքըն էլ: Այդ տարի նորա 30 օրավար տեղ ձշակեցին և անտեսական ու նիւթական նախանձելի վիճակի տիրացան, այնպէս որ՝ նանարանցի հայերը կը զարմանային, որ այդքան կարճ ժամանակում քրդերն իրենց համար մի լաւ ապագայ պատրաստեցին: Ոչ-պակաս կը զարմանային նորա և այն բանի մասին, որ քրդերն այդ տարում ձեռք բերին մօտ 50 դլուխ եղ, կով, գոմէշ, էջ ևն ու նանարանին սահմանակից Թոխէ գիւղի կորդ բլուրներէն ու անտառներէն մեծ տարածութեամբ տեղ վարձեցին՝ իրենց կենդանեացը արածեցնելու և անտառի փայտերէն օգտւելու համար:

Միւս կողմէն էլ «Կէս-կէս» քրդերի թիւը գնալով կը շատանար Սալիտի շուրջը. և այդ որքան կուրախացնէր, ի հարկէ, Մեկիք Միսաքին, որը համոզւած էր, որ Փափագ-օղիներին ազատելով «Խորթու-

թեան» ճիրաններէն՝ ճամբայ էր բացած կէսկէսներին առջև։ Նրա հաշուով շատ ժամանակ չէր հարկաւոր—ընդ ամէնը 5—10 ասարի միայն,—որ հարիւրաւոր բռնի բրդացած ընտանիքներ ընտելանալին հալալ աշխատանքին և ծուլէին իրենց նախկին արիւնակիցներին—հայերին հետ... Իսկ այդ նպատակին հասնելու համար Մելիքը պատրաստ էր զոհելու ամեն ինչ—ստացւածք, դրամ, տուն-տեղ... Թէկուզ այնուհետև իր փարթամ գերդաստանը մուրացկանութեան դուռը բաղխէր։—Այդ ոչինչ։ Միայն թէ՛ Մելիքի «մերամբ տեղը գար» (նպատակի իրագործուծը տեսնէր)։

Այդպէս է Բալուցի հայր։—Նա շատ զժւար կը համոզւի մի բանում։ Բայց համոզւելէն չետոյ էլ նպատակի իրագործման ընդունակ է զոհելու ամեն ինչ։ Զոհ պահանջող գործը չի սարսափեցներ Բալուցի չաչին...

Երանի՛ թէ խելացի, սիրա շահող ա-

ուաջնորդ-գործիչ ունենար Բալուցին և  
 թեևակոխէր նշմարիտ զաղափարականու-  
 թեան կեանքին ասպարէզը: Այն ատեն  
 դուք կը տեսնէիք Բալուցի չայի ան-  
 պարտելի կուրծքն ու ախոյեան հակատը:  
 Այդ մասամբ ցոյց տւաւ Բալուի չայ  
 երիտասարդութիւնը - ինթելլիկենցիկան  
 իննսնական թւականներին...

Ով բաղդ է ունեցել կարգալու ճի ժա-  
 մանակ Չորրորդ չայքում հրատարակող  
 «Դատ» հայաթերթը՝ նա կը հասկանայ  
 ինձ...

Բայց մենք շատ հեռացանք մեր նպա-  
 տակէն: Դառնանք, ընթերցող:

\* \* \*

Այդ տարի աշնան՝ մօտ 50 քրդեր ե-  
 կան «Կէօկտէրէ կոչող զիւղախմբէն,  
 որտեղի քրդերը նոյնպէս չայեր էին մի  
 ժամանակ և որոնք՝ անտանելի հարստա-  
 հարութեանց պատճառով՝ ստիպուել քրդ-

զացան և կաղմեցին Կէօկաէրէցի կոչւող հայակեր, արիւնախանձ «քիւրտ ցեղը»։

Սալիտը սիրով ընդունեց նրանց իր մօտ և Թոխէի անտառներում աեղ աւաւ նրանց, որպէսզի ածխագործութեամբ պարապին։

Բայց ի՞նչ ածխագործութիւն, մարդոց աչքին թող փչելու համար էին հնարել այդ անունը, բայց իսկապէս, զբաղւած էին դողութեամբ, աւաղակութեամբ, քրքրուն յատուկ ալան—թալանով...։

Նկատելի էր արդէն, որ Սալիտն ու Ռէսօն էլ առաջւան «աշխատողները» չէին. ծուլացել էին։ Երևի խեղճերը յոգնել էին, ինչ արած?

Հողի գործը, կարելի էր ասել, բոլորովին չանձնել էին 5—6 քրդերի, որոնց լիազօր-վերակացուն էր Զիւլֆիխար անունով մի գեղեցիկ և քաջարի տղամարդ, որին իր ազգիկը կնութեան տալու

Արամը

միտք ունէր մեր Սալիարը և այդ պատ-  
ճառով էլ բարձրացրել էր նրան:

Զիւլֆիխարը թէև այնքան էլ հմուտ  
չէր իրեն յանձնուած դործին մէջ, սակայն  
շնորհիւ իր խոհեմ, քաղցր, «վարեցող»  
բնաւորութեան՝ այնքան սիրելի էր դար-  
ձել նախարանցիներին, որ սրանք իրենց  
աչքի լոյսին պէս կը սիրէին նորան: Գիւ-  
ղացիք, որպէս հմուտ հողագործներ, ցոյց  
կուտային Զիւլֆիխարին, թէ ինչպէ՞ս  
անելու էր՝ այս ինչ արտուած այն ինչ  
բոյսը լաւ աճեցնելու, լաւ արդիւնա-  
ւորելու համար և այլն:

## XII.

Որքան որ քրդերը «կը բարւոքէին  
իրենց տնտեսական վիճակը», ինչպէս կա-  
սէր Մելիքը, այնքան ալ կաւելանար Ա-  
րամի և նրա համախոհների արտունջը՝  
Մելիքի և «Գեղի Մեծաւորներին» գէմ:  
Բանն այնտեղ հասաւ, որ մի կիւրակի

որ քսանի չափ երիտասարդներ հաւաքւեցան Նահարանի վերև «Թորոյենց» կոչւող բլրին վրայ, որ ծածկւած էր պրազատու ծառերով ու թփերով: Այգտեղ էին, ի ճիշի ալյոց, և Արամն ու իր քորը՝ ձափահիրը: Նոքա հաւաքւել էին, որ խելք-խելքի տան ու մտածեն, թէ ի՞նչ անելու է, որ քրդերը Նահարանի սահմաններում բոյն չիղնեն և եղածներն էլ հեռանան:

— Շատ ցաւալի է, կասէր Արամը, երբ ամենքը ձեկտեղ գալով՝ պարտիլի մի անկիւնում էին արդէն,— որ իմ հայրս աչինը եղաւ, որ Քրրմըցի քրդերին նախ իր մօտ ծառայութեան ընդունեց և ապա նրանց վարձու հող տւաւ... Նօրս օրինակին հետևեցան և Թոխէցիք ու այդ քրդերին չանձնեցին բաւական ընդարձակ տարածութեամբ անտառներ, 20 տարւան պաշմանաժամով... Այգպիսով քրդերն հաստատուեցան երկու զուտ հաշաբնակ գիւղերի սահմաններում և օրստօրէ կա-

ւելացնեն իրենց ցեղակիցների թիւն այդ տեղերում: Այժմ մօտ 100 հողի են դրրանք և կարող են մօտիկ յառաջիկայում այդքան էլ աւելանալ... Ձեզ կը հարցնեմ, սիրելի հայրենակիցներ, ի՞նչ պիտի լինի խեղճ զիւղացիների դրութիւնը, երբ դրրանք վերջնականապէս կը հաստատուին Թոխէի անտառներում և, ձեռք քաշելով հողագործութենէն, որ խորթ զբաղմունք է իրենց համար կսկսին բացարձակապէս պարապիլ ալան-թալանով...

— Ի՞նչ կրլինի — կրկնեց Թաթուլը՝ Մելիք Տէրաէրի որդին, — այն կը լինի, որ Նահարան և Թոխէ հայաբնակ զիւղերը կը դառնան ծառեր, իսկ քրդերը — ապականիչ թրթուրներ այդ ծառերի արմատներում...

— Ներեցէք, պարօններ, նկատեց մի ուրիշը, — կարծեմ այդպիսի տխուր գուշակութիւններ անել կարող է իւրաքանչիւր մարդ, որ ընդունակ է գիտելու: Ի՞մ

կարծիքով յառաջարաններէ կարիք չ'կայ,  
 պէտք է վճռել մեր անելիքը:

Ինչպէ՞ս թէ «կարիք չ'կայ», վիճեց  
 ձաւահիրը, — գուցէ կան այստեղ գանուղ-  
 ների մէջ այնպիսիներ էլ, որոնք, քեզ  
 պէս ասեմ, «տխուր գուշակութիւններ  
 անելու» տրամադիր չեն... Պէտք է նախ  
 լու ճանչնալ չարիքը և ապա գնալ նրա  
 դէմ...

— Պէտք է ճանչնալ, այ՛ո՛, չարիքը — կըր-  
 կնեցին միւսները, բացի 1—2-էն, որոնք  
 շատ էլ չուզեցին վիճել օրիորդի կարծի-  
 քին դէմ, որովհետև ձաւահիրը մեծ չար-  
 դանք կը վայելէր այդ դիւղի բոլոր, այս-  
 պէս ասած, երիտասարդաց կողմէն և  
 նրա խօսքն էլ միշտ մտածւած էր՝ նպա-  
 տակայարմար, ըմբոստ, «ազատ» խօսք  
 և միշտ էլ կշիռ ունեցող երիտասարդ-  
 ների աչքում: Եւ այդ ամենը շնորհիւ  
 Պ. Թափառականի:

Գեղեցիկ ձաւահիրը, հակառակ իր հօր  
 սպասածին, իր եղբօր և Պ. Թափառականի

ու մի քանի ուրիշ ըմբոսա երիտասարդ-  
հայրենակիցների բարոյական ազդեցու-  
թեան տակ դարձաւ մի՛ բողոքող, պա-  
հանջող, անվարեցող էակ: Դրանով թէև  
ձափահիւրր աուժեց իր վարկը «մեծերին»  
առջև, սակայն միւս կողմէն շահեցաւ ամ-  
բողջ «մտածողների» սէրն ու համակրան-  
քը: Նա լինելով երեսը պատռած — ինչ-  
պէս կասէին այդ կողմերում խլրտացող-  
ներին — մի բացառութիւն Նաճարան դի-  
ղի համարեա ամբողջ հայունիներին մէջ,  
նա անձնատուր եղաւ իր արիւնակիցների  
«միսն ոսկորէն զատող պաշտանների»  
բարեփոխութեան գաղափարին, որ  
ճնունդ էր առած Վասպուրականի սահ-  
մաններէն բարձրացող գաղափարական  
հոսանքէն և Պ. Թափառականի անդադ-  
րում Գարոյութիւններէն...

Ձափահիւրր չէր կարող զսպել իր ար-  
վար զայրոյթն այն դէպքերում մանա-  
ւանդ, երբ կը տեսնէր, որ երիտասարդ-  
մտածողների խուլ բողոքն ու հոգերուզիս

քարոզները կ'ոչնչանան մի անհատի-մեծա-  
ւորի մի ակնարկով:

— Ախար ինչո՞ւ է այդ այդպէս, կը  
հարցնէր նա ինքնիրեն սրտատուտը եղա-  
նակով: Եւ հալումատ ահող, ուղեղ ու  
կուրծք կրծող այդ հարցի՛ն դէժ յամա-  
ռօրէն կը ցցւէր դարաւոր ստրկութեան  
դրօշմած մահացող կնիքը՝ հասարակական  
կենցաղին վրայ, որի շնորհիւ անհատի  
բռնանալը ամբողջ համայնքների և նո-  
ցա ուղեղին վրայ—սրբազործւել էր...

— Ախ... Գաղաններ, — կը գոչէր նա  
դժւածի նման, — մինչև ե՞րբ պէտք է  
մարդկութեան բաղդի կծիկը հուպ տաք  
բռերումդ... Անհատներ...

Մինչդեռ, որ աւելի ցաւալին էր, այդ  
կարգի անհատներէ մէկն էլ իր հայրն էր,  
որ հաւանելով միայն իր խելքին՝ սիրով  
ընդունեց իր ծոցում և տաքացրեց նրանց  
— օձ-քրդերին... Իսկ այդ երէկւայ ծա-  
ռայ-քրդերը՝ այսօր տիրանալով նիւթա-  
կան մի պատկառելի դիրքի՝ կամաց-կա-

ձաց ցոյց կու տային իրենց կիւնը, չորուժ  
աչնքան թոյն կար, որ կարող էր մահ  
առթել ամբողջ հայ համայնքներին...

Ճավահիրը չէր կարող մոռացութեան  
տալ Սալիտի այն խենէշական, լպիրշ հայ-  
եացքները, երկվիմի խօսքերը, որոնցով  
կը դիմէր իր տիրոջ ազգկան և որով կը  
վիրաւորէր ճավահիրի սրբազան զգաց-  
մունքները...

— Ահ! Որքան գեղեցիկ ես, ճավա-  
հիր! կասէր մի անգամ Սալիտը, — երանի՛  
այն տղամարդուն, որ կը տիրանայ քեզ...

Այդ խօսքերը լսելէ չետոյ ճավահիրն  
զգաց, որ շուտով վրայ կը հասնի՝ քրր-  
դերի համար խօսքի սահմանէն գործի  
անցնելու շրջանը:

Այն ատեն... Եւ եթէ մինչ այդ ճա-  
վահիրը բացարձակապէս չէր «Լոյս ին-  
կել», չէր յայտնել իր դժգոհութիւնը՝  
տիրող հասարակական կարգերին դէմ:  
Եթէ մինչ այդ նա մասամբ «անյարմար  
էր դատած» այդ կողմերում իդական սե-

ուին չատուկ սպանիչ ամօթխածութեան սահմանէն զուրս գալը:— Այդ խօսքերը լսելէն չետոյ նա ժոյժ չունեցաւ այլևս լուելու... Առաջին անգամ նա յղացաւ միաքը՝ մի տեղ հաւաքուելու և փրկութեան հանապարհի վրայ մտածելու: Նա այդ միաքն չայտնեց իր եղբօրը և Թաթուլին, որոնց նա կը սիրէր իր բոլոր էութեամբ: Վերջիններս նպատակույարմար գտան օրիորդի առաջարկութիւնը և խմբուեցան այդտեղ:

— Եղբայրներ, կասէր ձավահիրը, — Պէտք է լաւ ուսումնասիրել, թէ այդ քրդերն ինչ ու ինչ եղանակով կը վնասեն մեզ, և այնուհետև պէտք է ուշի ուշով հետևենք նրանց իւրաքանչիւր շարժման, որպէսզի երբ նրանք կ'անցնին սոսկ կապալառուական իրաւունքների սահմանէն՝ իսկոյն և եթ նկատենք այդ և կտրուկ եղանակով զգուշացնենք... Պէտք է միաժամանակ այնպէս շարժել որ ոչ մեր մեծերի կատարեալ ցասումը շարժենք

մեզ վրայ, որով մի կողմը շինելիս միւս կողմը քանգած կը լինինք, և ոչ էլ քրքրեբրին թոյլ տանք, որ կոխկռտեն մեր իրաւունքները, մեր պատիւը...

Բայց ժողովականները չ'կարողացան շարունակել իրենց վիճարանութիւնները և ստիպւեցան գիւղ իջնելու: Որովհետև այդ միջոցին գիւղում մեծ իրարանցում ինկաւ և անսպասելի մի աղմուկ բարձրացաւ: Պէտք էր շտապել գիւղ և իրարանցումին պատճառն իմանալ:

### XIII.

Մի ժամ չետոյ պարզւեցաւ խնդիրը, որ հետևեալն է:

Մելիք Միսաբի չայ բանւորներէ մին գրանէ մէկ-երկու ժամ առաջ հրաման կատանայ Մելիքէն՝ գաշտ գնալ և ջրել բամբակի արտերը: Այդ օրը ջրի հերթը Մելիք Միսաբենցն էր: Մառան գաշտ կերթայ և կը տեսնէ, որ Սայիտի ծառա-

ները առւի ամբողջ շուրը կապել են իրենց՝ քրդերին պատկանող՝ արտերին վրայ: Հայ բանւորը կարծելով, թէ Սալիտի նորեկ ծառաները ջրի հերթապահութեան կանոններին անժանօթ լինելուն պատճառով սխալմամբ են արել, — շուրը կը դարձնէ իրենց բամբակնոցին վրայ և կըսկսի ոռոգել: Բայց չանցած կէս ժամ՝ շուրը կը կտրի: Բանւորը կըշտապէ «ջրբաժանի տեղը» և կը տեսնէ՝ մի քիւրտ բահը ձեռքում կրհսկէ:

— Այդ շուրն ո՞վ է դարձրել ձեր կողմը, քիւրտ, կը հարցնէ հայը:

— Ես, կը պատասխանէ քիւրտը և կը պատրաստւի մեկնիլ դէպի արտը:

— Բայց ինչո՞ւ ես դարձրել, տօ, դու չ'գիտէի՞ր մի՞թէ, որ այսօր ջրի հերթը մերն է և բացի մեզէն ոչ ոք իրաւունք չունի օգտւելու:

— Դու ո՞ւմ շուրն ես...

Մելիքի ծառան Էազաչ:սի անզամ ցաւ չ'զգաց «շուրն» մակդիրէն, որովհետև քրդ-

զերբ սովորաբար հայերին-ճանաւանդ ստորին դասակարգին—շուն կը կոչեն: Քրդու լեզուով «Քուզըքան ամէ» (շուներ եկան) կը նշանակէ «հայեր եկան» են...

— Ես Մելիք Միսաքի ծառան եմ, ասաց բանւորը մի առանձին հպարտութեամբ.— Իմ տէրն հրամայել է ինձ այդ ջրով ջրել իր արար:

— Իսկ Սալիա Պէկը, այսինքն իմ և ձեր ամենքի տէրը, հրամայել է ինձ այդ ջրով ոռոգել ի՛ր արտերը:

— Ի՞նչ, ի՞նչ... Ի՞նչ Սալիա Պէկ է, տօ... Պէկս որն է, լամուք... Դեռ երէկ էր՝ փորերդ վեց-վեց կանէր՝ այսօր պէ՛կ էք դարձել դլխիս...

Բայց Մելիքի համարձակախօս ծառան չ'կարողացաւ շարունակել, որովհետեւ քրդու բահը շողշողաց... և հայը, պատռած գլխով, արնաթաթախ փոււեցաւ գետին...

Ս.հա այդ դէպքի լուրն էր համբորդ-

ների միջոցաւ հասել Նաճարան զիւզը, որ մարդիկ այնպէս իրար էին անցել: Ոչ ոք չէր ուզեր հաւատալ իր լսածին, թէև ամենքը բաց աչքով կը տեսնէին չայ բանւորին կիսամեռ դրութեան մէջ, ժամի դրանն ինկած...

## XIV.

— Բայց ո՞վ էր այդ «Սաչիա Պէկը», կը հարցնէ, գիտե՞մ, ընթերցողը:

— Իա հէնց ինքը՝ Սաչիան էր-մօտիկ անցեալում Մէլիք Միսաբի ողորմելի ծառան, տարիներով անտուն-անտէր թափառող խեղճ քիւրտը...

«Քիւրտ Պէկի» Ա. Հատորիկէն արդէն գիտեն ընթերցողները, որ Բարձրագոյն հրովարտակով (Ֆէրման) Պէկութեան տիադոս շնորհւեցաւ Քրրմըցի քիւրտ ցեղի ցեղապետ Փափաղ-Օղլի Ալի աղային և նրա ժառանգներին որդւոց որդի: Աենք գիտենք նոյնպէս, թէ որքան սուղի նստե-

ցաւ Փափաղ-օղիիների վրայ այդ ողորմելի ախարոսը, որի շնորհիւ Ալի Պէկը «Դաւաճան» քստմնելի մակդիրը դրօշմեց իր նակատին և որով պատճառ դարձաւ մի ամբողջ ցեղի (Քուրմի) կոտորմունքին ու նոյն իսկ իր գերդաստանի շնչման: Ինքը՝ Ալի Պէկը, դեռ չ'հասած իր բաղձացած փաշայութեան, ինկաւ պատերազմի դաշտում՝ իրենց անկախութիւնը հերոսաբար սրով պաշտպանող բրդերի ցեղապետէն...

Ալի Պէկի սպանւելէն ասդին անցել էին տասնեակ տարիներ: Փափաղ օղիիների առնմէն մնացած երկու շառաւիղները՝ Սալիտն ու Ռէսօն, որ հազիւ հազ ճողոպրած էին՝ «դաւաճանի առնմին արժանապէս վարժատրող» Տէրսիմցոց պատուհասող սրէն և, որպէս Փախստական, ապաւինել էին Մելիք Միսաքի օճաղը, — սրանք մի օր լոյս ինկան Բալու քաղաքը: Ներկայանալով ծերունի դաւառապետին՝ Սալիտն ու Ռէսօն յայտնեցին նրան, որ իրենք «Պետութեան ուղուրին ա-

մեն բան զոհող» Այլի Պէկի որդիքն էին:

— Ո՞ւր կը մնաք այժմ, հարցուց գաւառապետը, որ ինքը՝ տխրահուշակ Ռիւշտին էր:

— Գայժաղամ էֆէնտի, պատասխանեցին Փափաղ-օղլիները, — մենք որպէս գաւառանի որդիք՝ չէինք կարող քրդերի մէջ մնալ: Ուստի անցանք Աշմուշատի գիւղերը և այժմ կը մնանք Նաճարանում:

— Հըմ... Հասկանալի է... Բայց հայերը ձեզ չէ՞ն նեղացներ այնտեղ:

— Ասենք՝ հայերը չեն նեղեր ձեզ, բայց եթէ նեղեն էլ՝ ի՞նչ կարող ենք անել, երբ մեր տէրը բոլորովին աչքաթող է արած ձեզ և չի հաճիր մի րոպէ մը տաժել, որ մենք այն անձնազոհ հերոսի որդիքն ենք, որն իր կենդանութեան ժամանակ իր գլուխը հրի և սրի ենթարկելով՝ կը նպաստէր Օսմ. Պետութեան զօրեղանալուն այս կողմերում...

— Տղաքս, գոչեց գաւառապետը՝ ախ

քաշելով,—դուք մարդ կը լինիր... Քուրմ գիւղը ձեզ նման քաշեր միշտ ծնած է և կը ծնի... Լիալոյս եղէք, որ ես ձեր մասին պիտի բարեխօսեմ, ուր հարկն է, և պիտի աշխատիմ, որ դուք տիրանաք ձեր ժառանգու թեանը...

Երկու եղբայրները շնորհակալութիւն չաչանելով՝ ոտքի ելան և հրաժեշտ տւին իրենց «Նոր բարեկամին և նրա որդոց պաշտպանին»։ Ռիշտի Պէկը մինչև բակի դուռը առաջնորդեց նրանց և—Ձեզ տեսնեմ, ասաց վերջին բոսկին,—որքան կարող էք՝ դելեցէք ձեզ շրջապատող կեանուրներին թող նրանք զիմեն ինձ, որ բողոքեն ձեզ դէմ, որպէս զի մի քիչ էլ ես դձեմ և այնպէս զրկեմ... Եթէ դուք խելացի շարժւիք, շատ չանցած, կը վերստանաք ձեր Պէկութեան տխրոսը և մի կերպ կը տիրէք Նահարանին կամ մի այլ չայարնակ զիւզի... Միայն թէ՛ աշխատեցէք, որքան կարելի է, ձեզ շրջա-

պատել հաւատարիմ, գործունեայ և կտրին  
բրդերով...

\* \* \*

Այնուհետև Սալիան ու Ռէսօն գործե-  
ցին համաժայն դաւառապետի հրահանգ-  
ներն և սկսեցին ափ-աշկարա բմբոսա-  
նայ: Մինչև որ՝ մի օր դաւառապետի  
կողմէն եկած յատուկ պատգամաբերը  
յայտնեց Փափաղ օղլիներին, որ արդէն  
Բայու քաղաքում ստացւած է մի Ֆէր-  
ման, որի շնորհիւ Սալիան ու Ռէսօն  
պաշտօնապէս կոչւելու էին—Սալիա Պէկ  
և Ռէսուլ Պէկ:

## XV.

Ջրւորների ծանօթ բնդհարումէն մի  
քանի օր չեառչ Մելիք Միսաքը Արամին  
ղրկից Սալիաին մօտ, որ հրամայէ վեր-  
ջինիս ծեծել յանդուզն ծառային և ան-

պայման վրձնաել նրան նաեւարանի սահմաններէն:

Արամը զնայով քրդերի բնակարանը տեսաւ, որ Սալիտը գլխին հաւաքած մի քանի տասնեակ երիտասարդ քրդեր՝ սրինդ կածէին և կովանա (gövendé) կը խաղալին<sup>1)</sup>: Օրը ուրբաթ էր, քրդերն այդ օր, որպէս մահմէդականներ, չէին աշխատեր:

Հասնելով նոցա մօտ՝ Արամը տհաճութեամբ բերեց քրդերին և կանգնեցաւ մի անկիւն, մինչև որ պարտոյները սաստիկ յողնած-քրտնած վար նստան հանգստանալու և քիչ վերջը էլի շարունակելու:

Արամը կզգար, որ քրդերի մէջ տեղի է ունեցել մի մեծ փոփոխութիւն: Որ առաջ քրդերը Մելիքէնց անէն որ և է մէկին տեսնելիս ոտքի կը կանգնէին, «պատիւ կանէին» և միով բանիւ կաշխատէ-

1) Քրդական մի պար է այդ, նման լազերի Թիթրէմէ խօրօնի կոչւող կլոր պարին:

ին ցոյց տալ, որ իրենք մի ժամանակ Մելիքի ծառաներն են եղել և այժմ էլ նրա շնորհիւ մի կտոր հաց կուտան: Մինչդեռ այժմ՝ Արամի յայտնելը, բարեկէլ՝ երբէք բանի տեղ չի գրին:

Այդ երևոյթը խոր խոցեց Արամի սիրտը...

— Ի՞նչ էր պատճառը—հարցուց նա վերջապէս մօտ գնալով Սալիաին, — որ ձեր քիւրա ծառան համարձակել էր զուր տեղը կուլի բռնել մեր բանւորին հետ և ի վերջոյ պատռել նրա գլուխը:

— Արովհետև ձեր ծառան կը կամենար մեր արտերն անջուր թողնել, այդ պատճառով էլ մէջերը մի փոքր դայմադալ են սարքել:

— Նախ՝ դուք իրաւունք չունէիք այդ օրւան ջրէն օգտուելու, քանի որ ջրի հերթը մերն էր: Երկրորդ՝ թէկուզ հերթը ձերն էլ լինէր, դուք պարտաւոր էիք՝ ի պատիւ իմ ծերունի հօր և ձեր տիրոջ զիջանիլ ձեր հերթը՝ վստահ լինելով, որ

հայրս կը զնահատէր ձեր այդ բարութիւնը և երբ և իցէ ձեր վնասը չէր կամենար: Բայց դուք փոխանակ այդպէս վարուելու՝ ուղեցիք նոյն խակ մեր հերթը խլել, ինչպէս որ խլեցիք էլ: Եւ Մելիք Միսաքի հայ բանւորի զլուխն անդամ պատռեցիք..:— Արամը դիտմամբ շեշտեց վերջին խօսքերն ու աւելացուց.

— Այդ յանդգնութեան համար հայրիկս հրամայեց ինձ յայտնել ձեզ, որ այսօր և եթ այդ ծառան հեռացրի՛ նաճարանի սահմաններէն:

Քիւրար կզգար, որ պէտք է այդ բոպէին տեղի ունենայ մի մեծ փոփոխութիւն մինչև այդ տիրոյ չարաբերութեանց մէջ: Որ պէտք էր առնել մի վեռական, խրոխտ քայլ: Որ պէտք էր բարձրացնել իրենց Պէկութիւնը վարադուրոյ քողը... Բայց ինքն էլ չ'դիտէր, թէ ինչո՞ւ այնքան դժւար կուզար իրեն առնել այդ

բայլը, չ'նայած որ նա ոչ մի կասկած կամ երկիւղ չէր կարող ունենալ զիմացինէն:

Անարդարութիւն զործելէ առաջ զգացւող խղճի խայթն էր այդ, որը սակայն մի բոպէ չետոյ տեղի տւաւ քրդուն մէջ բոչն զրած Գազանին... Եւ նա ասաց խրոխտադին.

— Հայրդ կարող է շատ բան հրամայել և դուն էլ կարող ես յայտնել ինձ, սակայն... այդքանով էլ բաւականանալու պայմանաւ...

— Ի՞նչ ասել կուզես, չեմ հասկանար միտքդ? հարցուց Սրամբ դառնութեամբ:

— Այս որ՝ մեր ու ձեր ծառաները շատ էլ կարող են ընդհարւել միմեանց հետ և նորէն հաշտւիլ: Եթէ ես ու հայրդ կամենանք ամէն մի ընդհարման համար բանակցութեան մտնել միմեանց հետ, — այդ դէպքում պէտք է մի զատարան հիմնենք և ուրիշ զործի երբէք չ'նայինք... Ուրեմն ի՞նչ կողմէն բարև աս-

րա հօրդ և ասա, որ ծառաների գործը  
 ծառաներին թողնելու է: Այսօր իմ ծա-  
 ռան ձերինի գլուխը կը պատուէ, վաղն  
 էլ ձերը—ձերինի՝ և գործը կը վերջա-  
 նայ...

— Այդպէս բան չիլինիր, Սալիտ, մենք  
 չենք կարող ձեր հասկացողութիւններով  
 առաջնորդուել: Դուք երբ կը գնաք Քու-  
 րմի սարերը՝ այնտեղ կարող էք դեկա-  
 վարուել ձեր «օրէնքներով»... Իսկ այժմ  
 պէտք է պատժել և վռնտել յանցաւորը,  
 որ ուրիշներն էլ զգուշանան և ընդհա-  
 րումների տեղիք չ'տան երբ և իցէ:

— Բայց կարժէ՞, Արամ, որ այդպիսի  
 մի չնչին դէպքի պատճառով մարդ իր  
 հաւատարիմ ծառան վռնտէ:

— Ինչպէ՞ս թէ չնչին դէպ, տօ, երբ  
 անպարտ ծառայի գլուխը երկու կէս է  
 արած և տղան այսօր-վաղը կը մեռնի...  
 Բայց թէ ձեր հասկացողութեամբ կար-  
 ժէ՞ թէ ոչ,—այդ չեմ ուզեր ես զխտե-  
 նալ: Հայրս, որպէս չաչտնի խաղաղասէր

ճարդ, որպէս և Նաճարան զիւղի Մէ-  
լիք-զիւղապետն՝ յարժար է դատել և  
հրամայել է անպայման վռնտել այդ ծա-  
ռաչին: Ձեզ կը մնայ յարդել նրա հրա-  
մանը և կատարել կէս առ կէս:

— Ձէ՛, Արամ, մեր օրէնքում զրւած  
չ'կայ, որ Միւսլիման Պէկը յարդէ  
և կատարէ մի Պիղծ Կհաւուրի հրա-  
մանը... Գնա և այդպէս էլ ասա քո հօ-  
րը, թող ինչ կուզէ՛ անէ:

— Եւ դու, անշնորհակալ քիւրա, կը  
համարձակիս իմ հօրը կեպո՞ւր անւանել,  
առանց միտք անելու, որ նրա՛ շնորհիւն  
է՛ այսօր աղա ես դարձել և դեռ Պէկու-  
թեան էլ հովերով կը յոխորտնս...

Ասաց Արամը և մի քայլ առաւ դէպի  
ապերախտ Բիւրտը...

\* \* \*

Կատաղութենէն «ինքզինքը կուտէր»  
խեղճ աղան և չէր կարող հանդուրժել  
քրդու յանդգնութեան դէմ:

— Ի՞նչ կը նշանակէ այս, կը մտածէր նա, միթէ՞ մենք այնքան փոքրացած մարդիկ ենք, որ երէկւան ծառան այսօր պէտք է ոտքի տակ տայ մեր իրաւունքները և մենք պիտի համբերենք... էլ ինչո՞ւ կապրինք, ի՞նչ կարժէ մեր կեանքը... մինչև ե՞րբ «լսենք» և «լռենք», հա՞... Ախ, ո՞ւր ես, Պ. Թափառակա՛ն, արի՛ և հասկացրո՛ւ մեր ծերերի փառած գլուխներին, որ լռութիւնը գերեզմանում պառկողներին է միայն արժան, որ շնչող մարդիկ պէտք է կատարելապէս իրենց պիտի տէրը լինին...

Եւ հարցերը, հոգեմաշ հարցերը կը խռնւէին նրա ուղեղում, որոնց պատասխանելու համար պէտք է մարդ ունենար մի քիչ և չարգը գիտենար այն բանին, որ մեր լեզուը կը կոչւի Պատիւ...

Քիւրտը արհամարհանքով նայեց բորբուած, կրակ կտրած Սրամին և հրամայեց սրինգ ածող և միւս քրդերին, որ սկսին բնդհատուած կովանտը...

— Քիւրտ, հօրս անունով կը հրա-  
մայեմ քեզ, առաց Սրամը՝ մօտ գնալով  
Սալիաին, — որ այսօր և եթ հեռացնես  
յանցաւոր ծառային մեր սահմաններէն.  
բացի այդ, որպէս Մելիք Միսաքի որդին,  
կզոռչացնեմ քեզ, որ այսուհետև աչքդ  
չօրս բանաս և միշտ հետևիս քո ծառա-  
ներին, որ անկարգութիւններ չանեն...  
Հակառակ դէպքում մեզ կստիպես ամեն-  
քիչ հեռացնել Սշմուշատէն...

— Լռէ՛, շուն հայ... ոչ թէ դու, այլ  
թէկուզ քո Աստուածը չէ կարող հե-  
ռացնել ինձ այս տեղերէն... Հիմա մայրդ...  
քոյրդ... հաւատքդ...

Եւ հայհօյանքների տարափին հետ մի  
ուժգին ապտակ իջաւ Սրամին:

— Խոտորնակին-Խոտորնակ, մռնչաց  
Սրամը և իր կապարեայ բռունցքովը  
փշրեց հակառակորդին ատամները...

Պարը նորէն ընդհատեցաւ և տաս-  
նեակ քրդեր փաշրենի բացականչութիւն-  
ներով թափւեցան Սրամի զլխին, որպէս

զի՛ որը փայտով, որը քարով, որը բր-  
 աունցքը և որն էլ աքային խոհայացնե-  
 լով՝ տեղն ու տեղը սպանեն «նորելուկ»  
 հային, որ նրա պիղծ հաւատակիցներն էլ  
 իմանային, թէ ի՞նչ կը լինէր Միւսլիման  
 պէկի դէմ յոխորաացող թշւառականի  
 վերջը...

Բայց Արամը այնպէս շուտով կուլ դնա-  
 ցող պատառներէն չէր: Նա մերկացրեց  
 իր փոքրիկ, սիրունիկ, թունաւոր դա-  
 շոյնը, կանգնեցաւ բազմութեան կենդ-  
 րոնում և դռչեց անչողպող ձայնով:

— Եթէ մինչև այսօր հայ մարդը  
 ստրկական համբերատարութեամբ զօհւել  
 է ձեր կրքերին, դուք այսօր ի՞ մէջ պի-  
 տի տեսնէք մի սւրիշ հայ, որ դիակ  
 զօհւել իր Պատւին համար և դիակ իր  
 հետ տանիլ այդ պատուի թշնամիներէն  
 մի քանիսին... Օ՛ն, ուրեմն «տակը մնա-  
 ցողի հողին դուրս գայ»...

Թէսօն, որ մինչև այդ ատեն լուռ հան-  
 դիսատես էր ախրող անցքին, երբ տեսաւ

եղբոր վիճակը, — առիւծի նման վրայ պըր-  
ծաւ, ճեղքեց ամբօսը և մերկ դաշոյնով  
չարձակւեցաւ հերօսին վրայ:

— Այ կը համարձակուի ծօտենալ մեզ  
— գոչեց նա՝ դառնալով միւս քրդերին, —  
նրա փորօտիքը դուրս կը թափեմ աչս  
դաշոյնով... Մարգարէն վկայ է, որ չեմ  
խնայեր՝ ով էլ լինի... Թողէք այդ հաշիւը  
ես ու Մելիքազնը մաքրենք...

Եւ սկսւեցաւ դարհուրելի մենամար-  
տութիւնը երկու քաջերի միջև: «Քարը  
քարի դէմ էր առել»: Երկու մարտիկներն  
էլ ճարպիկ բաներ էին: Այդ պատճառով  
ամբողջ մի ժամ արիւն-քրտնքի մէջ լո-  
ղացին նորա: Բայց՝ ատարեալ չաղթու-  
թիւնը դեռ ևս անորոշ էր:

Կատաղի հանդիսատեսներէն մի քանի-  
սը ատամները կը կրճտացնէին իրենց  
սրտի դայրոյթէն, բայց ինչ արած, «ա-  
դան հրամայել էր» չ'խառնւել: Ուրեմն  
պէտք էր սպասել ելքին:

Ըստ երևույթին վերջնական յաղթու-  
թիւնը Ռէսօի հողմն էր:

Բայց ոչ!

Հայ հերոսը հիասթափեցրեց ամենքին —  
Դիւցազն Ռէսօն «Կեցցե՛ս, քաջ  
հայ» գոռաց և ուժասպառ փռւեցաւ  
յաղթողի ոտքերին ներքև: Նա իր արիւ-  
նով ներկեց այն անբաղդ հողը, որի վրայ  
զարերի ընթացքում թափւել էր ստրուկ  
տանկահայի անպարտ արիւնը...

Արամն էլ մի քանի տեղերէ թեթեա  
կի վիրաւորւած էր:

Այդ իսկ բուպէին, երբ Ռէսօն ինկաւ,  
վրայ պրծան նրանց շրջապատողները և  
կամեցան ջարդուփշուր անել զարմանալի  
հային, «նրա մարմնի խոշոր բրդուեր ա-  
կանջները թողնել»: Բայց այժմ էլ միւս  
ազան-Սալիա Պէկը մէջ մտաւ և սաս-  
անց ամբոխին, որ ցրւի՝ առանց ձեռք  
տալու «ազնիւ Երիտասարդին»:

Եւ Սալիա Պէկը, իր ասպետական հո-  
գու բոլոր անկեղծութեամբը մօտեցաւ:

Արամին և այսպէս խօսեցաւ հայ բա-  
ռերով.

— Դու պէտք է ապրիս, քաջ հայ,  
որովհետեւ քո երակների մէջ ճշմարիտ  
աշիրութեան (աղնւական) մարուր  
արիւն կը հոսէ... Հայի հողը քեզ պէս  
քաջեր շատ քիչ կը ծնի... Եւ եթէ այդ  
հողի հարազատ զաւակները չեն բնգունակ  
գնահատելու այդ հազւագիւտ կարիճների  
արժանիքը,—զիտացիր ու՛ աշիր քիւրար  
դիտէ գնահատել քաջութիւնը, առանց  
երբէք հարցնելու, թէ ո՞վ է այդ քաջու-  
թեան տէրը... Այս ամենը տեսնելէ և  
լսելէ չետոյ դնա՛, ասա՛ քո հօրը, որ այ-  
սօր և եթ ձեր բանւորի դուխը պատուոյ  
ծառաս կը հեռանայ ձեր հողէն—գուցէ  
և ձեր աշխարհէն...

— Իսկ ես, շարունակեց նա խիստ  
չուզած ծայնով,—պիտի աշխատիմ հա-  
րազատ եղբօրս թանկագին արեան ամեն  
մէկ կաթիլին փոխարէն մի-մի հայ գո-  
հել... Օ՛ն, ուրեմն, Աստուած քեզ հե՛տ...

Բառերը պերճախօս էին, բովանդա-  
կութիւնը՝ խորիմաստ:

Մի բրդու-այն էլ աղնական բրդու-  
բերնէ դուրս եկած այդ ծանրակշիռ բա-  
ռերի բուն արժէքը շատ լաւ կը ճանչը-  
նար Արամը: Այդ պատճառով էլ քչանց-  
քովը սրբեց արիւնտ զաշոյնը, դրաւ  
պատեանին մէջ և հրաժեշտ տալով՝ հե-  
ռացաւ քրդերէն:

Սալիա Պէկը ուղեկցեց նրան բաւա-  
կան տեղ և տնխօս ճամբայ ծղեց...

\* \* \*

Այդ անցքէն մի օր չետոյ Հայ-Բունկ  
Թրքաբնակ դիւղի մոլլան Ռէսօի սպան-  
ւած տեղումը Թաղեց Ռէսօի և ջրուոր  
բրդու մարմինները: Վերջինս Սալիա Պէ-  
կի հրաձանով գնդակահար եղաւ՝ Ռէսուլ  
Պէկի մեռնելէն 12 ժամ միայն չետոյ:

Սալիա Պէկը չէր լսար իր եղբոր վրայ,  
քանի որ նա վատաբար չ'մեռաւ...

## XVI.

Էլ այնուհետև Նահարան գիւղի 300  
տուն հայերը կորցրին իրենց երբեմնի ան-  
դորու թիւնը:

Այսօր այս գիւղացու ծառան կը ծեծ-  
ւէր, վաղը միւսի աչքի լոյս եղր, ձին  
կամ գոմէշը կը գողացւէր, երրորդի ար-  
տում խոտի կամ ցորնի դէղը կը հրձգէր...  
Դա բարբարոսութեան առաջին և «ամե-  
նաթեթև» շրջանն էր:

Դրան լաշորդեց երկրորդը—մարդաս-  
պանութիւնները, որ կը պաշտահէին յա-  
նախակի: Շատ չանցած՝ վրայ հասաւ և  
երրորդ ցնցող շրջանը—սրբապղծութիւ-  
նը...

Կ'աւերւէր, կը քանդւէր, տակն ու վրայ  
կը լինէր մի ամբողջ հայ գիւղ...

— Իսկ այդ ամենի գէժ ի՞նչ՝ կանէր  
գիւղացիներ թական, ի՞նչ զէնք կը գոր-  
ծածէր, կը հարցնէ սիրելի ընթերցողը:

— Մի շատ հին, անգոր զէնք էր հայ

գիւղացու ձեռքինը, ընթերցող ձան,—  
գիւղացին աղօթք կանէր...

— Ուրիշ?

— Ուրիշ, ի՞նչ ասեմ... Կ'անիծէր  
Արամին, որ «գնաց շանը պոչին վրայ  
կոխեց և այսօր շունը կը խածէ»... Այ՛ո՛,  
նա կանիծէր Արամին...

— Հասկա Արամը, Պ. Թափառականը,  
նրանց ընկերները...— զուցէ կամենար  
հարցնել:

— Կը պատասխանեմ, կը պատասխա-  
նեմ, սիրելի ընթերցողներս, բայց «Քիւրա  
Պէկի» չետազայ հատորներուձ. համբե-  
րութիւնը լաւ բան է:

ՎԵՐՋ Բ. ՀԱՏՈՐԻ

7/31 1922







